ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1364 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41335-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/40992-15 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 02/14/15777-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 2,080,000 դրամ արժողությամբ «Լուսատուների վերանորոգում և պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 022208258) 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված՝ N 21Ա/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսատուների վերանորոգման և պատրաստման աշխատանքների իրականացում՝ 2,080,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«18» դեկտեմբեր 2015 թ.

16/3

## Լուսատուների վերանորոգում և պատրաստում
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք լուսատուները և պատրաստել նորերը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,080,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 նոյեմբեր 2015թ. – 20 դեկտեմբեր 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար պատրաստել և վերանորոգել լուսատուներ՝ 2,080,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Նիկոլ Դուման» ԱԿ-ի կողմից (ՀՎՀՀ 022208258, ՀՀ, Ք. Երևան, Արցախի 23/1)՝ պայմանագիր կնքված 13.11.2015<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 նոյեմբեր 2015թ. – 20 դեկտեմբեր 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի համար լուսատուների պատրաստում և վերանորոգում՝ 2,080,000 դրամով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական, ճարտարապետաշինարարական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կներկայացվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1365 - Ա
քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/-3950415 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39839-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված լուսատուների (12 տեղ, 151 կգ ընդհանուր քաշով, 6,342 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1366 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39956-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3-3997715 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտի (20 տեղ, 26,000 կգ ընդհանուր քաշով, 34,450 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 878,400 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արաբկիր վարչական շրջանի նորակառույց եկեղեցու համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1367 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության՝ բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/40543-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41191-15 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված անասնակեր (ցորենի թեփ՝ 8,500 կգ ընդհանուր քաշով, 55,250 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 40,000 ռուսական ռուբլի) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1368 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 դեկտեմբերի 7-ի N 07/80-2/38771-15 և դեկտեմբերի 8-ի N 06/3-3/38971-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փող. 19ա, ՀՎՀՀ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի Մ-1237-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1). «Գիզա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2015 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N AKH 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 3,762,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2). «Ժ.Ն-Ժ.Ս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02232947) 2015 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրամոնտաժային և շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 1,012,879 դրամի չափով,առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1369 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 դեկտեբերի 21-ի N 07/80-2/40997-15 և դեկտեմբերի 18-ի N 06/3-3/40802-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փող. 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004- որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի Մ-1237-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00253052) 2015 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված N 151204 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճարտարապետական գրքույքի և նախագծային փաթեթի կազմում՝ 7,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1370 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40936-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40579-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի հունվարի 21-ին կնքված՝ N 116483848 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի օգոստոսի 9-ին կնքված՝ N 014606 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած



ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի հուլիսի 25-ին կնքված N 09106149959 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում՝ 1,580,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված N 99/23/08/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1371 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-844-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«Դեպի Հայք» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/40482-15 և դեկտեմբերի 11-ի N 06/3-4/39788-15 եզրակացությունները և հաշվի առնելով «Դեպի Հայք» հիմնադրամի 2015 թվականի նոյեմբերի 20-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի «Դեպի Հայք» հիմնադրամի կողմից իրականացվող «Դեպի Հայք» ծրագրի մասին» N Մ-844-Ա որոշման մեջ (2014 թվականի ապրիլի 11-ի Մ-261-Ա որոշման խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «159,453,000 դրամ» բառերը փոխարինել «247,785,000 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետում «834,000 դրամ» բառերը փոխարինել «3,800,000 դրամ» բառերով.

3) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «2,500,000 դրամ» բառերը փոխարինել «3,500,000 դրամ» բառերով.

4) որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետում «1,000,000 դրամ» բառերը փոխարինել «2,700,000 դրամ» բառերով.

5) որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում «650,000 դրամ» բառերը փոխարինել «1,800,000 դրամ» բառերով.

6) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Դեպի Հայք» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան Հանրապետության 37, ՀՎՀՀ 02574662) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2015 թվականի օգոստոսի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ֆինանսական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 21,450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Այթի Սափորթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00119226) 2015 թվականի հունվարի 20-ին կնքված N L0015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովումների սպասարկման աշխատանքների իրականացում՝ 3,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատում եմ
«Դեպի Հայք» հիմնադրամի
գործադիր տնօրեն
Սևան Կարակյան

«Դեպի Հայք»
# ԾՐԱԳԻՐ

14.12.2015 թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Զարգացնել և ամրապնդել սփյուռքահայ երիտասարդների կապը Հայրենիքի հետ՝ հնարավորություն տալով նրանց մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ Հայրենիքի զարգացման գործում կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ երկարատև անձնական կապեր ստեղծել Հայրենիքում ու բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը, |
| 3 | Բարեգործը (բարեգործները) | Հովնանյան հիմնադրամ - Նյու Ջերսի, ԱՄՆ |
| 4 | Ծրագրի կատարողը | «Դեպի Հայք» հիմնադրամ<br>ՀՎՀՀ 02574662<br>Հանրապետության 37<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 54 00 37 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | ՀՀ մարզեր և ք. Երևան, ԼՂՀ, սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 247,785,000 ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպություններ և նախապես ընտրված սոցիալապես անապահով ընտանիքներ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.09.2013 – 31.12.2018 |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հիմնադրամը կազմակերպում է 20-32 տարեկան սփյուռքահայ երիտասարդների այցեր Հայաստան՝ կամավորական աշխատանքի և այդ միջոցով Հայաստանի տարբեր ոլորտների զարգացման նպատակով: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր կամավոր աշխատում է Հայաստանում գործող տարբեր հասարակական և բարեգործական կազմակերպություններում, օրինակ՝ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունում, «Տիրամայր Հայաստանի» կազմակերպությունում, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամում, «Մեղվիկ» մանկապատանեկան հասարակական կազմակերպությունում, «Ղողանջ» մանկական կենտրոնում, «Մանանա» ուսումնական կենտրոնում, «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնում և նման այլ կառույցներում, որի շահառուների թվում են սոցիալապես անապահով անձինք և երեխաներ: Կամավորները ապրում են Հայաստանում երկու ամսից մինչև մեկ տարի: Բացի շաբաթը 30 ժամ |

| | | |
|---|---|---|
| | | կամավորական աշխատանքից, երեկոյան ժամերին, «Դեպի Հայք» հիմնադրամը կազմակերպում է հայերեն լեզվի դասընթացներ և սեմինարներ նրանց կամավորությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Կամավորները օթևանում են մեր հյուրընկալ ընտանիքների ցանցում: Տարեկան կտրվածքով «Դեպի Հայք» հիմնադրամի ծրագրով Հայաստան են այցելում մոտ 185 կամավոր, որոնցից շուրջ 130-ը օթևանում են հյուրընկալ ընտանիքների մեր ցանցում: Կամավորները միջինում մնում են երեքից չորս ամիս:<br><br>1. 2013 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>1.1. օգնություն հյուրընկալ ընտանիքներին՝ 8,839,200 ՀՀ դրամ (որի դիմաց ընտանիքը կամավորին տրամադրում է առանձին սենյակ, նախաճաշ և հոգում է կոմունալ վարձերը)<br>2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է այցելել 92 կամավոր, որոնցից 60-ը օթևանել են հյուրընկալ ընտանիքներում, ընդ որում 2013 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին 29-ը օթևանել են հյուրընկալ ընտանիքներում<br>1.2. տրանսպորտային միջոցների օգտագործում (էքսկուրսիաների կազմակերպում)՝ 428,125 ՀՀ դրամ<br>1.3. շապիկների և պայուսակների տրամադրում կամավորներին՝ 104,220 ՀՀ դրամ<br><br>2. 2014 թ.-ին նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>2.1. օգնություն հյուրընկալ ընտանիքներին՝ 27,736,800 ՀՀ դրամ (որի դիմաց ընտանիքը կամավորին տրամադրում է առանձին սենյակ, նախաճաշ և հոգում է կոմունալ վարձերը) 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է այցելել 148 կամավոր, որոնցից 91-ը օթևանել են հյուրընկալ ընտանիքներում<br>2.2. տրանսպորտային միջոցների օգտագործում (էքսկուրսիաներ ի կազմակերպում)՝ 1,284,375 ՀՀ դրամ<br>2.3. շապիկների և պայուսակների տրամադրում կամավորներին՝ 312, 756 ՀՀ դրամ<br><br>3. 2015 թ.-ին նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>3.1. օգնություն հյուրընկալ ընտանիքներին՝ 26,832,000 ՀՀ դրամ (որի դիմաց ընտանիքը կամավորին տրամադրում է առանձին սենյակ, նախաճաշ և հոգում է կոմունալ վարձերը) 2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է այցելել 186 կամավոր, որոնցից 129-ը օթևանել են հյուրընկալ ընտանիքներում<br>3.2. տրանսպորտային միջոցների օգտագործում (էքսկուրսիաների կազմակերպում)՝ 1,284,375 ՀՀ դրամ<br>3.3. շապիկների և պայուսակների տրամադրում կամավորներին՝ 1,561,024 ՀՀ դրամ<br><br>4. 2016 թ.-ին նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>4.1. օգնություն հյուրընկալ ընտանիքներին՝ 43,264,000 ՀՀ դրամ ( որի դիմաց ընտանիքը կամավորին տրամադրում է առանձին սենյակ, նախաճաշ և հոգում է կոմունալ վարձերը) |

4.2. տրանսպորտային միջոցների օգտագործում (էքսկուրսիաների կազմակերպում)՝ 1,284,375 ՀՀ դրամ
4.3. շապիկների և պայուսակների տրամադրում կամավորներին՝ 1,874,000 ՀՀ դրամ

5. 2017 թ.-ին նախատեսվում են հետևյալ ծախսերը՝
   5.1. օգնություն հյուրընկալ ընտանիքներին՝ 43,264,000 ՀՀ դրամ (որի դիմաց ընտանիքը կամավորին տրամադրում է առանձին սենյակ, նախաճաշ և հոգում է կոմունալ վարձերը)
   5.2. տրանսպորտային միջոցների օգտագործում (էքսկուրսիաների կազմակերպում)՝ 1,284,375 ՀՀ դրամ
   5.3. շապիկների և պայուսակների տրամադրում կամավորներին՝ 1,874,000 ՀՀ դրամ

6. 2018 թ.-ին նախատեսվում են հետևյալ ծախսերը՝
   6.1. օգնություն հյուրընկալ ընտանիքներին՝ 43,264,000 ՀՀ դրամ (որի դիմաց ընտանիքը կամավորին տրամադրում է առանձին սենյակ, նախաճաշ և հոգում է կոմունալ վարձերը)
   6.2. տրանսպորտային միջոցների օգտագործում (էքսկուրսիաների կազմակերպում)՝ 1,284,375 ՀՀ դրամ
   6.3. շապիկների և պայուսակների տրամադրում կամավորներին՝1,874,000 ՀՀ դրամ

Ընդհանուր առմամբ, 2013 թ.-ի սեպտեմբերից մինչև 2018 թ.-ի դեկտեմբեր «Դեպի Հայք» հիմնադրամը ծրագրի բյուջեից հատկացնում է 193,200,000 ՀՀ դրամ՝ իբրև օգնություն հյուրընկալ ընտանիքներին, 6,850,000 ՀՀ դրամ՝ տրանսպորտային միջոցների օգտագործման համար և 7,600,000 ՀՀ դրամ՝ շապիկների և պայուսակների տրամադրման համար, որոնց ընդհանուրը կազմում է 207,650,000 ՀՀ դրամ: Ծրագրի կազմակերպչական ծախսերը կազմում են 40,135,000 դրամ:

**10 Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը**

| N | Նկարագրությունը | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպու թյան կամ մատակարարի անվանումը | ՀՀ դրամ ծրագրի կողմնորոշիչ արժեք առանց ԱԱՀ - 01.09.2013 – 31.12.2018 |
|---|---|---|---|---|
| 1 | Հեռախոսակապի ծառայություն | 115226873 | ԱրմենՏել | 2,085,000 |
| 2 | Հեռախոսակապի ծառայություն | 088754 | Վիվա Սել - ՄՏՍ | 2,400,000 |
| 3 | Ինտերնետային ծառայություն | 001/2011 Հավելված 1 | Վիվա Սել - ՄՏՍ | 800,000 |
| 4 | Հեռախոսակապի ծառայություն | 648408 | Վիվա Սել - ՄՏՍ | 1,500,000 |
| 5 | Ավտոբուս (տրանսպորտային ծառայություններ) | ԱՏԾ-05-2013 | Էլիտ Բաս | 6,850,000 |
| 6 | Խմելու ջրի մատակարարում | | Էվրի Դեյ | 1,800,000 |
| 7 | Խմելու ջրի մատակարարում | | ՌոքԱրմ | 2,700,000 |
| 8 | Տպագրություն շապիկների վրա | | Տոպլ | 3,800,000 |
| 9 | Տպագրություն պայուսակների վրա | | Տիգա | 3,800,000 |
| 10 | Գրասենյակային պարագաներ (գրենական պիտույքներ, տնտեսական պարագաներ) | | Պիկո-վիկո | 3,500,000 |
| | | | | ՀՀ դրամ ծրագրի կողմնորոշիչ արժեք առանց ԱԱՀ -21.10.2015-31.12.2018 |
| 11 | Սերվերային համակարգչային և ցանցային համակարգերի ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովումների սպասարկման աշխատանքեր | | ԱՅԹԻ ՍՈՒՓՈՐԹ | 3,900,000 |
| 12 | Ֆինանսական հաշվառման ծառայությունների մատուցում | | ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ | 21,450,000 |
| 13.1 | Հյուրընկալ ընտանիքներում օթևանում 2013-2015 | | Հյուրընկալ ընտանիքներ | 63.408.000 |
| 13.2 | Հյուրընկալ ընտանիքներում օթևանում 2016-2018 | | Հյուրընկալ ընտանիքներ | 129.792.000 |
| | | | | Ընդամենը 247,785,000 |

**11 Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր**

Կողմնորոշիչ արժեքներն են նշված ծառայության համար՝ 01.09.2013 – 31.12.2018
- հեռախոսակապի ծառայություն՝ 5,985,000 դրամ
- ինտերնետային ծառայություն՝ 800,000 դրամ
- գրասենյակային ծախսեր՝ 3,500,000 դրամ
- խմելու ջրի մատակարարում՝ 4,500,000 դրամ

Կողմնորոշիչ արժեքներն են նշված ծառայության համար՝ 21.10.2015 – 31.12.2018
- Ֆինանսական հաշվառման ծառայություններ՝ 21,450,000
- Սերվերային համակարգչային և ցանցային համակարգերի ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովում՝ 3,900,000

Ընդամենը 40,135,000 դրամ

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1. ՀՀ սփյուռքի նախարարություն<br>2. «Տիրամայր Հայաստանի» Պողոսյան Կրթական Կենտրոն<br>3. ՍՈՍ Մանկական Գյուղեր բարեգործական հիմնադրամ<br>4. «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ամսեկան զեկուցում և հաշվետվություններ, մոնիթորինգ, աուդիտ Լինդա Եպոյան և բարեգործ Հովնանյան հիմնադրամ, օրենքի սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Գործադիր Տնօրեն Սևան Կաբակյան

16/12.22

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1372 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-289-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1046 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մոմավառության շենքի համար օգտագործվող նյութերի լաբորատոր փորձարկում» ծրագրի մասին» N Մ-289-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1373 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1209-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի «Նոր Բայազետ» զարգացման համայնքային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գավառ քաղաքի կենտրոնական հրապարկի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-1209-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1374 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39877-15 և դեկտեմբերի 11-ի N 06/3-3/39664-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 02/14/15355-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 01/12.1/4720-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,764,100 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված N ՀՀ-Կ-19/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աշակերտական գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 2,764,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՍՈՒՐԳԱՆ [stamp, signature]

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան
«08» դեկտեմբերի 2015 թ.

**« Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցի մասնակի կահավորում»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական / իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.764.100,00 ՀՀ դրամ: |

16/1

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ դեկտեմբերի 07-ից մինչեւ 2016 մարտի 07-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի դեկտեմբերի 07-ից մինչեւ 2016 թվականի մարտի 07-ը ընկած ժամանակահատվածում կահավորել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի դպրոցը: Արժեքը՝ 2.764.100,00 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի /կցվում է/ համաձայն գույքի պատրաստում, գնում տեղափոխում և անհատույց հանձնում՝ 2.764.100,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1375 - Ա
քաղ. Երևան

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԻՎԱՆՅԱՆ ԳՅՈՒՂԻ 50 ՏԵՂԱՆՈՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/40079-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39981-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 01/14/15689-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,682,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի 50 տեղանոց մանկապարտեզի ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված N ԼՂ-Կ-Հ-01/15-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 8,682,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել [illegible] տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն [illegible] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության [illegible]:

[illegible]

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«[illegible]» դեկտեմբերի 2015թ.

# « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի 50 տեղանոց մանկապարտեզի ամբողջական կահավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Հիմնադրամի կողմից կառուցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի 50 տեղանոց մանկապարտեզը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Իվանյան համայնք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 8.682.500,00 դրամ: |

16/2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի 50 տեղանոց մանկապարտեզը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ դեկտեմբերի 08-ից մինչեւ 2016թ փետրվարի 08-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ դեկտեմբերի 08-ից մինչեւ 2016թ փետրվարի 08-ը ընկած ժամանակահատվածում կահավորել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի 50 տեղանոց մանկապարտեզը՝ 8.682.500,00 դրամ արժեքով |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելվածի ցանկի համաձայն՝ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 8.682.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

16/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1376 - Ա**

**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՐԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37495-15 և նոյեմբերի 26-ի N 06/3-3/ 37046-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 02/14/14600-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N ՖԲ/ԱեՄ-2-1/10586-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 85,232,000 դրամ արժողությամբ «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ФԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2013 թվականի հունիսի 18-ին կնքված՝ N ID 1604 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2011 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 131/11 պայմանագրում նշված գործարքը (2015 թվականի նոյեմբերի 16-ի N 4 համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Մարգսյանի կողմից
«19» նոյեմբերի 2015թ

## Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016 թ. իրականացվող «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը:<br><br>Ներկայումս ծրագրում ընդգրկված են 935 երեխաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, ամերիկահայ ընտանիքներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Ջավախք:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 85 232 000 ՀՀ դրամ: Որից՝<br><br>դրամական օգնություն 80 482 000 ՀՀ դրամ,<br>կազմակերպական ծախսեր 4 750 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի մարզերում և Ջավախքում բնակվող 935 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝ Սյունիքի մարզից 209, Շիրակի մարզից 69, Տավուշի մարզից 48, Արարատի մարզից 383, Արմավիրի մարզից 30, Արագածոտնի մարզից 50, Կոտայքի մարզից 62, Գեղարքունիքի մարզից 34, և Ջավախքից 50 երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2016 – 31.12.2016 |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դրամական օգնության տրամադրում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ մինչև 100 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ: **Ընդհանուր գումարը՝ 80 482 000 ՀՀ դրամ:**<br><br>2. Հայ Առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում:<br><br>Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br><br>Կազմակերպական ծախսեր՝ 4 750 000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքն է **85 232 000** ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2016 - 31.12.2016 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 250 000 դրամի չափով՝ պայմանագիր N ID 1604 կնքված 18.06.2013թ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի (ք. Երևան 0012, Հրաչյա Քոչար 13/1, ՀՎՀՀ 00930093) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ավտոմեքենայի վառելիքի ձեռք բերման համար 01.01.2016 - 31.12.2016 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 500 000 դրամի չափով՝ պայմանագիր 131/11, կնքված 14.11.11թ «Ֆլեշ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 4 750 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 5.57 %-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է<br><br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 000 000 ՀՀ դրամ<br>կապի ծառայություն 250 000 ՀՀ դրամ<br>տնայցերի հետ կապված ծախսեր 2 500 000 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության,<br>3. Տեղական ինքնակառավարման մարմինների |

| | | |
|---|---|---|
| | | 4. Հայ Առաքելական Եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վիրահայոց թեմերի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1377 -Ա

քաղ. Երևան

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/37555-15 և նոյեմբերի 26-ի N 06/3-3/ 37037-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 02/14/14789-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 03/07-1/14301-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 80,100,000 դրամ արժողությամբ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 015.08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հունիսի 1-ին կնքված N 07-0125-22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ______ կողմից

«19» նոյեմբերի 2015թ

# Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2017 թ. իրականացվող Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ)

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայաստանի երիտասարդական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության տակ գործող, ՀՀ Կառավարությանն առընթեր և այլ գերատեսչական պատկանելիություն ունեցող գիտական և կրթական հիմնարկներ:<br>Բնագավառը՝ գիտություն և կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 80 100 000 ՀՀ դրամ:<br>Այդ թվում դրամաշնորհի գումար՝ 74 400 000 ՀՀ դրամ:<br>Կազմակեպական ծախսեր՝ 5 700 000 ՀՀ դրամ:<br><br>Մեկ դրամաշնորհի գումարը կազմում է 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Միջոցները ստացվելու են ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ:<br>Ընդամենը 31 գիտական խմբեր,<br>Ընդհանուրը՝ 125 գիտնականներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2016 – 30.01.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ՀՀ թերթերում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցները էլ. փոստով, անգլերեն լեզվով գրված իրենց աշխատանքները ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի անցկացման կազմ. կոմիտեին(Հետազոտական խորհրդին), որը համապատասխան |

2

| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Արտակենտրոնային, Խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ ոչ այնքան վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի ներքո գտնվողները Կենտրոնից աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում:<br>Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում:<br>Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ Ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և Արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում:<br>Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնար բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի:<br>Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցներին և ծառայություններին, որոնք առնչվում են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված ռիսկային իրավիճակը: Սոցիալ- |

| | | |
|---|---|---|
| | | հոգեբանական խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնողները 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հեռախոսային կամ այցելությունների միջոցով: Երեխաները Կենտրոն են ուղղորդվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանափակում-ների:<br>Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, կրթական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը 2016թ. համար կազմելու է 113,172,738.00 ՀՀ դրամ, որը ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին եռամսյակ՝ 28,293,184.5 ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակ՝ 28,293,184.5 ՀՀ դրամ, երրորդ եռամսյակ՝ 28,293,184.5 ՀՀ դրամ և չորրորդ եռամսյակ՝ 28,293,184.5 ՀՀ դրամ:<br>Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների.<br>1. սնունդ 17,188,000.00 ՀՀ դրամ<br>2. բժշկական սպասարկում/դեղորայք/ և հագուստի ձեռքբերում 2,700,000.00 ՀՀ դրամ<br>3. կոմունալ և կապի ծախսեր 10,770,370.00 ՀՀ դրամ<br>4. շինությունների սպասարկում 1,200,000.00 ՀՀ դրամ<br>5. հաշվապահական և աուդիտորական ծառայություն 5,396,000.00 ՀՀ դրամ<br>6. շահառուների սպասարկմանն անհրաժեշտ տրանսպորտային ծախսեր ՝ 4,900,000.00 ՀՀ դրամ<br>7. գրասենյակային պարագաներ 900,000.00 ՀՀ դրամ<br>8. սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) 55,370,000.00 ՀՀ դրամ,<br>9. Վարչական աշխատակազմի ծախսեր՝ 3,100,000.00 ՀՀ դրամ<br>10.Մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման ծախսեր 3,670,000.00 ՀՀ դրամ<br>11. ՀՀ Ոստիկանություն կողմից իրականացվող ծառայություն՝ 7 978 368 ՀՀ դրամ:<br>Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք 2016թ. հունվարի 01-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝<br>1. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հյուսիս» մասնաճյուղ, ք. Երևան, Քոչար 13ա, ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 222226, կնքված 06.08.2008թ. Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար - 3 500 000 ՀՀ դրամ<br>2. «Հայռուսգազարդ» ՓԲԸ, ք.Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317, 07.07.2013թ կնքված Պայմանագիր N 013.08.13.0948, Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար - 5 000 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 3. «Երևան ջուր» ՓԲԸ ք.Երևան, Արովյան 66ա, ՀՎՀՀ 01555351, Պայմանագիր՝ կնքված 01.04.2009թ. Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար - 1 000 000 ՀՀ դրամ<br>4. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ, ք. երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052, երկկողմանի Պայմանագիր, Պայմանագրի գինը 01.01.2015թ.-31.12.2015թ. համար 300 000 ՀՀ դրամ<br>5. «Աշտարակ - Կաթ» ՓԲԸ, Արագածոտնի մարզ, գյուղ Ագարակ, ՀՎՀՀ 05001995, Պայմանագիր՝ կնքված է 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ. Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ<br>6. «Դավիթ 84» ՓԲԸ, ք. Երևան, Դրոյի 22/1, ՀՎՀՀ 00833046, Պայմանագիր՝ կնքված 26.11.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար - 1 300 000 ՀՀ դրամ<br>7. «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ 02226764, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար – 1 500 000 ՀՀ դրամ<br>8. «Տեխնոքեմ Ինտերնեյշնլ» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 278, ՀՎՀՀ 01529519, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.15թ Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 200 000 ՀՀ դրամ<br>9. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Սենթրալ Այժա ընդ Կոկասիս Բի Վի» ընկերության հայաստանյան մասնաճյուղը ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, թիվ 17 ՀՎՀՀ 02586628, Հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ-համաձայնագիր թիվ 50100215, կնքված 25.11.2014թ. և վերջինիս հավելված 1, առ 29.12.2014թ. Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 4 896 000 ՀՀ դրամ<br>10. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ, ք.Երևան, Նուբարաշեն 10փ., տ.6, ՏԳՀ՝ ք.Երևան, Մյասնիկյան պող. 5/1, ՀՎՀՀ 00433357, Պայմանագիր N 21, կնքված 21.10.2015թ., Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ<br>11. «Էյ-Ի-Ջի-Սերվիս», ք.Երևան, Արոնցի-10, ՀՎՀՀ 00930884, 09.04.2010թ. Պայմանագիր N Ե-1118, Համաձայնագիր N 3/Ե-1118, 10.04.2013թ. և |

| | | |
|---|---|---|
| | | Համաձայնագիր N 6/Ե-1118, 02.11.2015թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 170 370 ՀՀ դրամ<br><br>12. ՀՀ Ոստիկանություն, ք.երևան, Նալբանդյան 130, ՀՎՀՀ 01533334, 08.01.09թ. կնքված Պայմանագիր N 01/09 և կից Համաձայնագրեր՝ կնքված 01.03.2010թ. և 02.11.2015թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 7 978 368 ՀՀ դրամ:<br><br>13. «Ալեքս Գրիգ» ՍՊԸ, ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ., 2/2, ՀՎՀՀ 01842346, Պայմանագիր՝ կնքված 14.10.2011թ. և Համաձայնագիր՝ 11.10.2013թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 5 000 000 ՀՀ դրամ<br><br>14. «Յուքոմ» ՍՊԸ, ք.Երևան, Սայաթ-Նովա 40/1, ՀՎՀՀ 00024873, Պայմանագիր N 023/27/112012՝ կնքված 27.11.2012թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 800 000 ՀՀ դրամ<br><br>15. «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, ք.Երևան, Հանրապետության 62/133, ՀՎՀՀ 00861057, Պայմանագիր՝ կնքված 10.10.2013թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 400 000 ՀՀ դրամ<br><br>16. «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ, ք . Երևան, Պռոշյան 11/5, ՀՎՀՀ 04718853, Պայմանագիր՝ կնքված 02.11.2015թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ<br><br>17. «ՆՈՐ ՍԵՊ» ՍՊԸ, ք . Երևան, Դրոյի 22/4, ՀՎՀՀ 01013499, Պայմանագիր՝ կնքված 09.11.2015թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ<br><br>18. «ԼԱԳՈՌԱ» ՍՊԸ, ք . Երևան, Զաքարիա Քանաքեռցու 117-43, ՀՎՀՀ 00077712, Պայմանագիր՝ կնքված 09.11.2015թ.<br>Պայմանագրի գինը 01.01.2016թ.-31.12.2016թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 21,366,370.00 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժողության 18.88 %-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են կոմունալ և կապի ծառայությունների (10,770,370.00 ՀՀ դրամ), շինությունների սպասարկման (1,200,000.00 ՀՀ դրամ), հաշվապահական և աուդիտորական ծառայությունների (5,396,000.00 ՀՀ դրամ), գրասենյակային պիտույքների (900,000.00 ՀՀ դրամ) և վարչակազմի աշխատավարձի (3,100,000.00 ՀՀ դրամ) համար նախատեսված ծախսերը: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային Խնամակալության հանձնաժողովներ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն: |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Հայաստանի գրասենյակների, «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի Խորհրդի, ինչպես նաև եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1382 - Ա**

**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/39505-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39986-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ամերիկայի ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից ուղարկված հաշմանդամի սայլակների և մահճակալների (9 տեղ, 761 կգ ընդհանուր քաշով, 8,350 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 700 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը բաշխվելու է Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերաններին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1383 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/40547-15 և դեկտեմբերի 18-ի N 06/3-3/40773-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱՄ/22.2/14514-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամ - Ցյուրիխի համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լողական սարքերի բաղադրիչներ (մեկ տեղ, 2,5 կգ ընդհանուր քաշով, 340.20 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1384 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

## («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38802-15 և դեկտեմբերի 9-ի N 6/3-3/ 39319-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բի Էս Սի» բիզնեսի աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930412) 2015 թվականի մարտի 13-ին կնքված N 0053-040315 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 12,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1385 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/28806-15 և դեկտեմբերի 10-ի N 03/3-3/ 39378-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված N C0854 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինտերնետային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 468,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Աստղիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2015 թվականի հունվարի 8-ին կնքված N 007/SCI-ARM/GEN/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1386 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38966-15 և N 06/3-3/38811-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2012 թվականի փետրվարի 29-ին կնքված N 10864278 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 60,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի հունվարի 29-ին կնքված N 003 պատվեր-դիմումում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 960,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2015 թվականի մարտի 30-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 116560100 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բաժանորդային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 840,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N ՄՍ-31/10-1 և 2014 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N ՄՍ-23/09-2 պայմանագրերում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տարածքի վարձակալություն՝ 18,852,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի նոյեմբերի 21-ին կնքված N ՄՍ-21/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը պահեստային տարածքի վարձակալություն՝ 306,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2013 թվականի հունվարի 9-ին կնքված N ՄՍ-09/01-13 պայմանագրում (2013 թվականի հոկտեմբերի 31-ի և 2014 թվականի նոյեմբերի 1-ի փոփոխությունների խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակի տարածքի սպասարկում 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 917,125 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1387 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40816-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40613-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Էվրի Դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N J 02-13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Բյուրեղ» աղբյուրի ջրի մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նորդ Ավենյու» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555764) 2014 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կոմունալ ծառայությունների մատուցում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի հունվարի 25-ին կնքված՝ N 230834 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2013 թվականի նոյեմբերի 21-ին կնքված՝ N 022/21/11/2013 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ N 115080665/S4004016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Կ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում շարժական կապի ծառայությունների մատուցում՝ 2,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Սփյուռ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01801068) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N 308-Գ-132 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տեղեկատվական ծառայությունների մատուցում՝ 62,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ՍԱՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N AR 201115/2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում ապրանքների ձեռքբերում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548908) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված՝ N 19/2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016

թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում թղթի և գրենական պիտույքների ծեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2013 թվականի նոյեմբերի 20-ին (2014 թվականի փետրվարի 11-ի համաձայնագիր թիվ 1)կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 7,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1388 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40893-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40614-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ուրբան Յունիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00078998) 2015 թվականի նոյեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային և հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում՝ 28,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1389 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40892-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40612-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հուն-Սավ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 7,180,530 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1390-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-656-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայաստան Համահայկական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/40130-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39978-15 և հաշվի առնելով Հայաստան Համահայկական հիմնադրամի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N ՀՀՀ. 5/27-640 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի Հայաստան Համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար գուդրոնի ներկրում և վերամշակում» ծրագրի մասին» N Մ-656-Ա (2015 թվականի հուլիսի 30-ի N Մ-831-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1391- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/40990-15 ու դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41217-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/14710-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը («Ret Cam» ցանցաթաղանթային խցիկ (ակնաբուժական սարքավորման մաս)՝ 1 տեղ, 2.3 կգ, 1,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

**Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1392- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/40310-15 ու N 06/3-3/40255-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱՄ/22.2/14502-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (նատրիումի քլորիդ՝ 0.9%,100 մլ՝ 6,800 հատ պլաստիկ տոպրակով, 136 արկղ, 882 կգ քաշով, 4,338.4 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,871.22 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1393- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40825-15 ու դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40703-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/14708-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (նատրիումի քլորիդ՝ 0.9%,100 մլ՝ 8,300 հատ պլաստիկ տարաներով, 166 արկղ, 1,096 կգ քաշով, 5,295.4 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,473.44 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1394- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38786-15 ու դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38772-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N ԱՄ/22.2/14045-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 3 տեղ, 669 կգ քաշով, 158,688 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1395- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38805-15 ու դեկտեմբերի 8-ի N 06/3-4/38813-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N ԱՄ/22.2/14044-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 4 տեղ, 17 կգ քաշով, 2,628 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 52,100 հնդկական ռուփի, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1396-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/40985-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40704-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/14707-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-317-Ա և 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-1004-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի գնում՝ 8,420,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՓՐԻՆԹԻՆՖՈ» ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00819468) 2015 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բուկլետների տպագրում՝ 848,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1397- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 9-ի N 1/08.2/12604-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39878-15 ու N 06/3-3/40052-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1275-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2015 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/1 (ԿԲՀ-ԱԱՊ-ԱՊՁԲ-15/01) պայմանագրի և 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 1 համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վառելիքի ձեռքբերում՝ 390,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կարկոմավտո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00059627) 2015 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/21 (ԿԲՀ-ԱԱՊ-ԱՊՁԲ-15/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի արտադրության «ՈՒԱԶ 23632-148» պիկապ և «ՈՒԱԶ 3163-105-11» մակնիշի երկու ամենագնաց ավտոմեքենայի գնում՝ համապատասխանաբար 7,100,000 և 7,300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1398- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/40501-15 ու դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39984-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1223-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գորեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09209539) 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N 04/15-BMZ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի Տանձատափ գյուղում փողոցային լուսադիոդային լապտերների մատակարարման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 5,397,337 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Սյունիքի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1399- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1284-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/39502-15 ու N 6/3-3/39537-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N ԱՄ/22.2/14422-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1284-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2015 թվականի նոյեմբերի 23-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԴՊԱԿ-32-1 պայմանագրի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 1 համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռքբերում՝ 3,112,200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1400-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-258-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐ-ՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39876-15 և դեկտեմբերի 10-ի N 06/3-3/39551-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N ԱՄ/22.2/14421-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագիր» N Մ-258-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷՍԹԵԹ Ֆարմա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433863) 2015 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N Գ02-4/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 7,735,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1401-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-360-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔ-ՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Ձայնալարերը հեռացվածների միավորում» հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 07/80-2/38560-15 և դեկտեմբերի 4-ի N 06/3-3/38357-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ձայնալարերը հեռացվածների միավորում» հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Ահարոնյան 5/2, ՀՎՀՀ՝ 01003935) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Ձայնային խնդիրներ ունեցող հաշմանդամների ռեաբիլիտացիա» բարեգործական ծրագրի մասին» N Մ-360-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 009657 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 350,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 013.12.15.1158 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 650,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1402- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N Մ-416-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի հունիսի 11-ի N 1/08.2/11251-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հունիսի 16-ի N 07/80-2/15549-15 ու հունիսի 17-ի N 06/3-3/15669-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» ծրագրի մասին» N Մ-416-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1283-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կամարաշար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08611667) 2015 թվականի նոյեմբերի 23-ին կնքված՝ N ԽԱՊԱՊԸԱՇՁԲ-15/1-Ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ում առկա 2 շարժական վագոն-տնակներից 3 պահակատեղերի վերափոխման, ծիանոցի հարդարման, ադմինիստրատիվ շենքի հարդարման և տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 4,512,084 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1403- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N Մ-591-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/41658-15 ու դեկտեմբերի 16-ի N 06/3-3/40383-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N ԱՄ/22.2/14532-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աճառյան թ. 2, ՀՎՀՀ՝ 02504895) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելում, բուժօգնություն, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և ուսուցում» ծրագրի մասին» N Մ-591-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1215-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դարֆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02609379) 2015 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/6-ՁԻԱՀ-15/2-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անվադողերի ձեռքբերում՝ 60,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00088004) 2015 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/13-ՁԻԱՀ-15/1-2 պայմանագրում նշված գործարքը, որով



նախատեսվում է գրասենյակային կահույքի ձեռքբերում՝ 288,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ֆոտոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90036001) 2015 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/13-ՁԻԱՀ-15/1-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային կահույքի ձեռք բերում՝ 305,930 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Մոսէսքո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04214892) 2015 թվականի դեկտեմբերի 22-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/6-ՁԻԱՀ-15/2-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ավտոպահեստամասերի ձեռքբերում՝ 2,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1404 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/41763-15 ու դեկտեմբերի 22-ի N 06/3-3/41490-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14817-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝ 5 արկղ, 8 կգ քաշով, 5,465.32 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 264.93 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Առաքվող բեռի ցանկ
համաձայն N 150174, 149669, 149640, 149607, 148244 հաշիվ-ապրանքագրերի

| Նո | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Լինեզոլիդ, 100մգ/5մլ, հատիկներ ներքին ընդունման համար, 150 մլ, շիշ | 10 | 4873.9 |
| 2 | Դելամանիդ, 50 մգ, դհտ., բլիստեր | 672 | 54.46 |
| 3 | Դելամանիդ, 50 մգ, դհտ., բլիստեր | 672 | 54.46 |
| 4 | Դելամանիդ, 50 մգ, դհտ., բլիստեր | 672 | 54.46 |
| 5 | Իբուպրոֆեն, 400 մգ, դհտ | 2000 | 23.24 |
| 6 | Օնդասենտրոնի հիդրոքլորիդ, 8 մգ, դհտ | 800 | 404.80 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 5465.32 |

Հայաստանյան Մասնաճյուղ 01538594
Մ. 16/10.11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1405- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/41604-15 ու դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41228-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14808-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (լաբորատոր ազդանյութեր՝ 3 տեղ, 24.8 կգ քաշով, 3,961.84 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1406-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/41605-15 ու դեկտեմբերի 22-ի N 06/3-3/41491-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14806-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռները (լաբորատոր ազդանյութեր՝ 2 տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 1,698.52 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, 1 տեղ, 1.7 կգ ընդհանուր քաշով, 648 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1211-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1407-Ա**

**«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/40980-15 և N 06/3-3/41070-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 02/14/15817-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11527-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N ԱՄ/22.2/14626-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 03/07-1/15112-15, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 24/3683 և Երևանի քաղաքապետի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի ~~N 02/34-66777h եզրակացությունները~~,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին նկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2016 թվականին իրականացվող՝ 114,117,218 դրամ ընդհանուր արժեքով, «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Կենտրոն» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2004 թվականի հունիսի 17-ին կնքված՝ N 010309530 51/3162/4682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2015 թվականի նոյեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի



1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 150,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N 263135 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 1,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 012.12.15. 0546 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2015 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված՝ N Ե-243 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազապաշտպան համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 69,718 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N AR 071215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 20,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Վալենսիա» ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835704) 2015 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 2-12/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխաների այցելություն ջրաշխարհ՝ 540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2010 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N 74556 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Ֆարինի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061455) 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 1/12-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի

հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարում՝ 1,206,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2014 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված՝ N 116/14 պայմանագրի և 2015 թվականի դեկտեմբերի 7-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բենզինի գնում՝ 2,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատում եմ
"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպության
տնօրեն Արմենուհի Հովհաննիսյան

2016 թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## «ՕՐՐԱՆ» օգնություն կարիքավոր ընտանիքներին

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծերերին |
| 2 | Ծրագրի բարեգործական ոդակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը, |
| 3 | Բարեգործը (բարեգործները) | ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ /Անգլիա/,"OSI AF Armenia, Ցիրիկյան ընտանիք,Հակոբ Բարսեղյան |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Երևան<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 114,117,218 (հարյուր տասնչորս միլիոն հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր տասնութ) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագիրը սկսել է գործել 2000թ. ապրիլի 19-ից, 16 երեխաներով և 27 ծերերով:<br>Այժմ ծրագրում ներգրավված են.<br>• 6-16 տարեկան 105 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>• 50 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, անուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: |

Ա-16/8

| | | |
|---|---|---|
| | | Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է "ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն", Երևանի տարբեր վարչական շրջաններ սոցիալական բաժինների, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ «ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի » հետ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2000թ. ապրիլին և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2016թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող իր եռահարկ կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 105 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:<br>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 50 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:<br>• 105 երեխայի և 50 թոշակառուի ամենօրյա սնունդ- տարեկան կազմում է 38,694,555 դրամ<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 4,283,263 դրամ<br>• սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ - տարեկան 5,798,967 դրամ<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 11,797,775 դրամ<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո շաբաթական 6 օր 105 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, և ձեռարվեստական հինգ կենտրոններում ուսուցում (Փայտամշակում, մակրամե, կավագործություն,նկարչության, բացիկների պատրաստում)- տարեկան 18,530,940 դրամ<br>• արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիք, սպորտային ապրանք)– տարեկան 4,000,000 դրամ<br>• նվիրատվություն.<br>- ծայրաստիճան կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում- տարեկան 5,500,000 դրամ,<br>- 90 երեխաների ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 5,616,000 դրամ,<br>- 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ,շախմատ և այլ) ուսման |



Arminе V. Hovsanisian

| | | |
|---|---|---|
| | | վարձերի վճարում - տարեկան 1,260,000 դրամ;<br>• «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով-4,200,000 դրամ<br><br>Ընդամենը 99681500 դրամ (իննսունինը միլլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր )<br>Կազմակերպչական ծախսերը-14,435,718 դրամ , ընդամենը ծրագրի բյուջեն 114,117,218 դրամ |

| | | N | Ամսա թիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրութ-յունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայություն-ների և աշխատանք-ների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | 1 | 17.06.04 | N010309530 51/3162/4682 | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1,600,000 |
| | | 2 | 27.11.15 | N 07-0012-6-1 | Երևանի «Ջրմուղ Կոյուղի» | Խմելու ջրի մատակարարում | 150,000 |
| | | 3 | 14.08.08 | N-263135 | " Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ | էլեկտրա էներգիայի մատակարարո | 1,800,000 |
| | | 4 | | | ԱՁ «Խաչատուր Շահինյան» | Հացի գնում | 3,000,000 |
| | | 5 | 01.12.15 | Պայմանագիր N 012.12.15.0546 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,200,000 |
| | | 6 | | | | Արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ) | 4,000,000 |
| | | 7 | 12.12.15 | Ե-243 | "Էյ-Ի-Ջի-Սերվիս" ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում | 69,718 |
| | | 8 | | | "Գրանթ Թորնթոն" ՓԲԸ | Տարեկան ֆինանսական աուդիտ | 1,500,000 |
| | | 9 | 07.12.15 | Պայմանագրի AR 071215 | "ՍԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Մթերք | 20,000,000 |
| | | 10 | | | | փոստային ծախսեր | 180,000 |
| | | 11 | | | | գրասենյակային ծախսեր | 1,936,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | | | Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ | Գազի կաթսային տեխնիկական զննում | 100,000 |
| 13 | 10.12.15 | Պայմանագրի 2-12/15 | "Վալենսիա" ՀՁ ՍՊԸ | Երեխաների այցելություն Ջրաշխարհ ( 90 եր*6000դր) | 540,000 |
| 14 | | | "Ռիպա" առողջարան ՍՊԸ | Երեխաների հանգիստ "Ռիպա" առողջարանում (70եր*7 օր*8000 դր) | 3,360,000 |
| 15 | 16.12.10 | 74556 | "Ղ-Տելեկոմ" ՓԲԸ | Հեռախոս. կապի մատակարարում | 1,200,000 |
| 16 | 11.12.15 | 1/12-15 | "Ֆարինի" ՍՊԸ | Ծխվածքաբլիթ,գատա | 1,206,000 |
| 17 | | | «Կարանդաշ» ՍՊԸ | Դպրոցական գրենական պիթույք | 2,854,000 |
| 18 | 10.12.14 | Պայմանագիր N116/14,համաձայնագիր առ 07.12.15 | "Ֆլեշ"ՍՊԸ | Բենզինի գնում | 2,700,000 |
| 19 | | | Արմենիա Հյուրանոցային Համալիր ՓԲԸ | միջոցառում դրամական միջոցների հայթայթման նպատակով | 4,200,000 |
| | | Ընդամենը | | | 53,595,718 |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «Գազպրոմ Արմենիա, «ԱրմենՏել»-ի, "Ղ-Տելեկոմ" ՓԲԸ ,«Հայաստանի էլեկտրական Ցանցեր», Երևանի «Ջրմուղ Կոյուղի» ընկերությունների հետ:<br>• գազ-տարեկան՝ 3,200,000 դրամ<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 01.01.16-31.12.16, - 69718 դրամ<br>• ջուր՝ 150,000 դրամ<br>• էլեկտրաէներգիա՝ 1,800,000 դրամ<br>• հեռախոս՝ 2,800,000 դրամ<br>• գրասենյակային ծախսեր՝ 1,936,000 դրամ<br>• ֆինանսական աուդիտ «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից 1,500,000 դրամ<br>• փոստային ծախսեր 180,000 դրամ<br>• բենզինի ծախսեր-2,700,000 դրամ<br>• |



| | | |
|---|---|---|
| | | • տեխնիկական անվտանգություն -100000 դրամ<br><br>Ընդամենը 14,435,718 (տասնչորս միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր տասնութ) դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3.ՀՀ առողջապահության նախարարություն<br>4.ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>5.Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ<br>6.Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7. ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժին<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով<br>• ամսեկան եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• եռամսյակային հաշվետվություններ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ի կողմից |

Ծրագրի ղեկավար Արմենուհի Հովհաննիսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1408-Ա**

# «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ-ՎԱՆԱՁՈՐ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/41954-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41630-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 02/14/15781-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N ՖԲ/ԱՆՄ-2-1/11569-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14811-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 04/07-1/15209-15 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 24/3695 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 101/104.3.2/5545-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) 2016 թվականին իրականացվող՝ 66,997,557 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Հյուսիսային տարածքի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2013 թվականի փետրվարի 6-ին կնքված՝ N 117345015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N 03108134796 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06934743) 2013 թվականի հունվարի 22-ին կնքված՝ N 218150806 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2011 թվականի մարտի 25-ին կնքված՝ N 000502 պայմանագրում և 2015 թվականի սեպտեմբերի 24-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում, 1,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 4-293 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 106,557 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Սպարապետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06915002) 2014 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N V -001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում մթերքի մատակարարում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Մխիթար Սիմոնյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 86035603) 2015 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ N 3/12-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հացամթերքի մատակարարում՝ 5,513,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին ու Վանաձորի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1

Հաստատում եմ
"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպություն
տնօրեն Արմինե Հովհաննիսյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «ՕՐՐԱՆ-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին»

2016թ.

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակները | Օգնել ֆինանսական դժվար կացությունում հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը: |
| | Բարեգործը (բարեգործները) | Միավորված Ազգերի Կազմակերպության Հայաստանյան գրասենյակ (ՄԱԿ) , ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Սերժ Թանկյան (ԱՄՆ) ,Ակիյան ընտանիք. |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր<br>Սոցիալական բնագավառ |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 66,997,557 (վաթսունվեց միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | • 6-16 տարեկան 105 երեխա , ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն:<br>• 28 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: |

| | | |
|---|---|---|
| | | Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է Օրրանի մասնագիտական խմբում, որի մեջ-մտնում են Օրրանի սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը եւ գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում Օրրանը համագործակցում է "ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության" Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական բաժնի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաե « ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն» հետ |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսել է 2009թ. հոկտեմբերից և այն շարունակական է: Սույն ծրագիրը նախատեսված է 2016թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործել իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:այն շարունակական է: |
| 9 | Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Օրրան ԲՀԿ-ն Վանաձոր Տիգրան Մեծ 4ա հասցեում գտնվող կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ եւ ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 105 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ եւ իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական եւ բժշկական ծառայություն:<br>Շաբաթը 6 օր Օրրանը տաք նախաճաշ է մատուցում 28 միայնակ, կարիքավոր ծերերի եւ հաշմանդամների:<br>• 105 երեխայի և 28 թոշակառուի ամենօրյա սնունդ, նաև խոհանոցային սարքավորում և պարագաներ - տարեկան կազմում է 31,767,485 դրամ<br>• բժշկական և հոգեբանական ծառայություններ - տարեկան 3,413,654 դրամ<br>• սոցիալական ծարայություն,հագուստ և կոշիկ - տարեկան 5,296,179 դրամ<br>• մշակութային միջոցառումներ - տարեկան 600,000 դրամ<br>• դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 79 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, - տարեկան 4,996,593 դրամ<br>• ձեռարվեստի խմբակներ՝ մակրամե, փայտամշակում, կավագործություն - տարեկան 3,202,890 դրամ<br>• 70 երեխաների և 15 թոշակառուի ամենօրյա երթևեկության ծախսեր- տարեկան 8,299,200 դրամ<br>• արտասահմանից բեռների ներմուծում(բարերարների ցանկությամբ ուղարկված նվերներ, |



| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | գրենական պիտույքներ, խաղալիք)– տարեկան 3,000,000 դրամ<br>Ընդամենը 60,576,000 (վաթսուն միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ :<br>Կազմակերպչական ծախսերը-6,421,557 դրամ , ընդամենը ծ րագրի բյուջեն 66,997,557 դրամ | | | | | |
| 10 | 6 | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրու-թյունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
| | | 1 | 06.02.13 | 117345015 | «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ | Հեռախոսային, ինտերնետային կապի մատակարարում | 600,000 |
| | | 2 | 01.04.2014 | 03108134796 | « Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | Գազի մատակարարում | 3,200,000 |
| | | 3 | 22.10.13 | 218150806 | "Լոռի-Ջրմուղկոյուղ"ՓԲԸ | Խմելու ջրի մատակարարում | 180,000 |
| | | 4 | 25.03.11 | Պայմանագիր 000502, համաձայնագիր առ 24.09.15 | " Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ "Դեբեդ" մ/ճ (Վանաձոր էլ.ցանց) | էլեկտրա էներգիայի մատակարարում | 1,700,000 |
| | | 5 | 11.12.15 | Կ-293 | "Էյ Ի Ջի Սերվիս" ՍՊԸ | Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում | 106557 |
| | | 6 | 11.12.2014 | V-001 | «Սպարապետ» ՍՊԸ | Մթերք | 20,000,000 |
| | | 7 | 15.12.15 | 3/12-15 | "Մխիթար Սիմոնյան" ԱՁ | Հացի գնում | 5,513,250 |
| | | 8 | | | | Բենզինի գնում | 200,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 9 | | | | գրենական պիտույքների,դպրոցական պայուսակներ | 556,000 |
| | | 10 | | | | Ձմերային կոշիկ | 790,000 |
| | | 11 | | | | ձեռարվեստական կենտրոներին համար նյութեր | 360,000 |
| | | 12 | | | | գրասենյակային ծախսեր | 435,000 |
| | | | | | | Արտասահմանից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ) | 3,000,000 |
| | | | | | | Ընդամենը | 36,640,807 |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Կենցաղային ծախսեր՝ պայմանագրեր «ԱրմենՏել»-ի, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր», "Լոռի-Ջրմուղկոյուղ" ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ընկերությունների, ինչպես նաև Վանաձոր քաղղաքի «Օրրան» շենքի կահույքի պատվիրման և սարքավորումների գնման պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ:<br>• ջուր՝ - 180,000 դրամ<br>• էլեկտրաէներգիա՝ - 1,700,000 դրամ<br>• հեռախոս՝, ինտերնետ - 600,000 դրամ<br>• գազ-տարեկան՝- 3,200,000 դրամ<br>• գրասենյակային ծախսեր- 435,000 դրամ<br>• բենզին-200,000 դրամ<br>• գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում- 01.01.16-31.12.16, - 106557 դրամ<br><br>Ընդամենը 6,421,557 (վեց միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>3. ՀՀ առողջապահության նախարարություն<br>4. ՀՀ կրթության և գիտության նախարարություն |



| | | |
|---|---|---|
| | | 5. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություններ<br>6. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>7.«ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն » հետ:<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• ամսական եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• եռամսյակային հաշվետվություններ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություններին<br>• ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն Ամիо» ՍՊԸ-ի կողմից |

*Ծրագրի ղեկավար՝* *Արմենուհի Հովաննիսյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1409-Ա**
**քաղ. Երևան**

### «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 154 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/41194-15 ու դեկտեմբերի 18-ի N 06/3-3/40800-15 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 02/14/15835-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 114,150,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի քաղաքապետարանի թիվ 154 մանկապարտեզի հովանավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՀՁ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված՝ N 114141630 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2012 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N 7-14-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 190,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N 882949 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 1,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 013.08.13.1078 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 2,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ-Ի-Ջի սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2015 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N Ե-325 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ տարեկան 133,630 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն Հ. Ստեփանյանի կողմից

«14» դեկտեմբերի 2015թ.

**«Երևանի քաղաքապետարանի թիվ 154 մանկապարտեզի հովանավորում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևանի քաղաքապետարանի թիվ 154մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 165 սաների և 21 աշխատակիցների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան՝ սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 114,150,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի քաղաքապետարան: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագիրը շարունակական է, այն իրականացվում է 2007 թվականից: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մանկապարտեզի բոլոր ծախսերի /բացառությամբ աշխատավարձի և սննդի/ ֆինանսավորում՝ 01.01.2016թ.-31.12.2020թ.-114,150,000 դրամ, |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - կոմունալ ծախսեր՝ 26,750,000 դրամ, յուրաքանչյուր տարի 5,350,000 դրամ,<br>- տնտեսական ծախսեր՝ 3,350,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 670,000 դրամ,<br>- գրենական պիտույքներ՝ 2,550,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 510,000 դրամ,<br>- աուդիտորական ծախսեր՝ 4,000,000 դրամ, յուրաքանչյուր տարի 800,000 դրամ,<br>- չնախատեսված ծախսեր՝ 9,700,000 դրամ, յուրաքանչյուր տարի՝ 1,940,000 դրամ,<br>Բարեգործական օգնության ներմուծում /հագուստ, կոշիկ, կահույք, խաղալիք, հիգիենիկ, խոհանոցային և այլ պարագաներ՝ 67,800,000 դրամ, յուրաքանչյուր տարի 13,560,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի աուդիտի իրականացում՝ 4,000,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1410-Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԼՈՒՍԱՍՏՂԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/41195-15 և դեկտեմբերի 18-ի N 06/3-3/40799-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 02/14/15836-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 01/6424-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 16,280,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի հովանավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 120630 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 670,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 02108133738 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 1,380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ռոզա-92» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05518416) 2015 թվականի նոյեմբերի 10-ին



կնքված՝ N Ռ-92 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն Հ. [illegible]յանի կողմից

«9» դեկտեմբերի 2015թ.

## «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզի խովանավորում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Գյումրու քաղաքապետարանի «Լուսաստղիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 150 սաների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում: Մանկապարտեզի բոլոր ծախսերի (բացառությամբ աշխատավարձերի) ֆինանսավորում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Գյումրի՝ սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 16,280,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գյումրու քաղաքապետարան: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագիրը շարունակական է: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | - սննդամթերքի և գրենական պիտույքների տրամադրում, կոմունալ ծառայությունների, բժշկական ու տնտեսական ծախսերի ֆինանսավորում՝ 14,980,000 դրամ,<br>- աուդիտորական և չնախատեսված ծախսեր՝ 1,300,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - սննդամթերքի ձեռքբերում (կամ ներմուծում)՝ 12,000,000 դրամ,<br>- կոմունալ ծախսեր՝ 2,300,000 դրամ,<br>- տնտեսական և բժշկական ծախսեր՝ 370,000 դրամ,<br>- գրենական պիտույքներ՝ 310,000 դրամ,<br>- ծրագրի աուդիտի իրականացում՝ 600,000 դրամ,<br>- չնախատեսված ծախսեր՝ 700,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի աուդիտի իրականացում՝ 600,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1411-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39935-15 և դեկտեմբերի 15-ի N 06/3-3/40066-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 02/14/15367-15 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 01/10.3/6101-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 555,400,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Իջևան քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին և Իջևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 12/15)
02 դեկտեմբերի 2015թ.

հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

### «Իջևան քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Իջևան քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում՝ հաշվի առնելով համայնքում մանկապարտեզի ժամանակակից և հարմարավետ շենքի անհրաժեշտությունը: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, քաղ. Իջևան, սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 555,400,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Իջևանի քաղաքային համայնք՝ շինությունն անհատույց հանձնվելու է համայնքին: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի դեկտեմբերի 02-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը: |

16/12

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. հողային աշխատանքների իրականացում - 6,048,000 դրամ,<br>2. շենքի կառուցման և ներքին հարդարման աշխատանքներ - 516,822,000 դրամ,<br>3. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ - 32,530,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.12.2016թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:.<br>1. հողային աշխատանքների իրականացում – 1,209 խոր. մետր - 6,048,000 դրամ,<br>2. երկաթբետոնե հիմնակմախքի և պատերի կառուցման, հիմքի ջրամեկուսացման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 260,850,000 դրամ, որից ամրանների, ամրալարերի և այլ նյութերի ներմուծում – 40,230,000 դրամ<br>3. էլեկտրասնուցման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի կառուցում, ջեռուցման համակարգի մոնտաժում, սանհանգույցների կառուցում և դրանց համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 91,123,200 դրամ,<br>4. տանիքի ջրամեկուսացման համար նյութերի ձեռք բերում և կառուցման աշխատանքների իրականացում - 1,411 քառ. մետր - 33,744,000 դրամ,<br>5. արտաքին երեսպատման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում<br>- գրանիտե, մարմարե, տրավերտինե, բազալտե սալիկների, ներկանյութերի և այլ նյութեր ձեռք բերում – 4,760 քառ. մետր – 44,394,800 դրամ,<br>- հատակների, պատերի կառուցման և հարդարման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 3,024 քառ. մետր – 34,550,000 դրամ<br>6. դռների, պատուհանների, ապակե ֆասադի պատրաստում և տեղադրում 920 քառ.մետր – 39,840,000 դրամ,<br>7. տարածքի բարեկարգում, կառուցապատման այլ աշխատանքների իրականացում - 8,000 քառ. մետր – 32,530,000 դրամ,<br>8. նախագծային աշխատանքների իրականացում – 5,600,000 դրամ,<br>9. ավտոտրանսպորտային ծախսեր – 6,720,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, | Տավուշի մարզպետարան, Իջևանի քաղաքապետարան |



| | | |
|---|---|---|
| | տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1412-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՂՀ-Ի ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38965-15 և դեկտեմբերի 10-ի N 06/3-4/39377-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 9-ի N 02/14/15168-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 189,437,700 դրամ ընդհանուր արժողությամբ «ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքի հանրապետական հիվանդանոցին հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 11/15)
27 նոյեմբերի 2015թ.

հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարդոյան

### «ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի հանրապետական հիվանդանոցի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, քաղ. Ստեփանակերտում «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կառուցված հանրապետական հիվանդանոցի հարակից տարածքի բարեկարգում : |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտ, քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 189,437,700 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ, քաղ. Ստեփանակերտի քաղաքային համայնք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի դեկտեմբերի 01-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը: |

16/13

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Հողային աշխատանքների և ուղղահայաց պլանավորման աշխատանքների իրականացում - 8,500,000 դրամ,<br>2. Ճեմուղիների, հենապատերի, լողավազանների կառուցման, կանաչապատման և կառուցապատման այլ աշխատանքներ - 161,640,700 դրամ,<br>3. ոռոգման, արտաքին լուսավորության, հեղեղատարների ցանցի կառուցում - 19,297,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.12.2016թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:<br>1. Հողային աշխատանքների և ուղղահայաց պլանավորման աշխատանքների իրականացում - 7,600 քառ.մետր - 8,500,000 դրամ,<br>2. սալահատակների և ճեմուղիների կառուցում, ասֆալտապատման աշխատանքներ 5,300 - քառ. մետր – 105,000,000 դրամ,<br>3. լողավազանի, ջրի ֆիլտրացման համակարգի և պոմպակայանի կառուցում – 38,952,000 դրամ,<br>4. հենապատերի, աստիճանների կառուցում և այլ բարեկարգման աշխատանքների կատարում – 17,688,700 դրամ,<br>5. ոռոգման և հեղեղատարների ցանցի անցկացում – 740 գծամետր – 6,597,000 դրամ,<br>6. արտաքին լուսավորության ցանցի անցկացում – 1030 գծամետր, 81 կետ – 12,700,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ստեփանակերտի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

10/13

16/14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1413-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39875-15 և դեկտեմբերի 11-ի N 06/3-3/39810-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 02/14/15356-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11311-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 3,520,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիրը (կցվում է):

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«18»-ը դեկտեմբերի 2015թ.

## «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարեգործական օգնության տրամադրում՝ սննդի հատկացում, բժշկական օժանդակություն, գյուղատնտեսական տեխնիկայի և ապրանքների հատկացում, ուսման վարձի տրամադրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Շվեյցարիա, Բայնվիլ ամ Զեե, Ֆելդշտրասսե 9)<br>Գերմանիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Գերմանիայի Դաշնություն, Բադ Զեքինգեն, Շյոնբերգեր Վեգ 1)<br>Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական կազմակերպություն (Հոլանդիա, Նունսպեեթ 8071, Սպորլաան 1ա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | քաղաք Երևան և Հայաստանի Հանրապետության մարզեր՝ սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,520,000 (երեք միլիոն հինգ հարյուր քսան հազար) ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 4,335 շահառու՝ սոցիալապես անապահով ընտանիքներից, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: |

2

| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 1. ***Ամենամսյա սննդի հատկացում՝***<br>***<u>քաղ. Երևան</u>*** - 3,201 շահառու՝ նախատեսվում է 1,688,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***<u>Արարատի մարզ</u>***՝ - 88 շահառու: Համայնքներ՝ քաղ. Արտաշատ - 16 երեխա, քաղ. Վեդի - 17 երեխա, գյուղ Գետազատ - 39 երեխա, գյուղ Մրգանուշ- 16 երեխա: Նախատեսվում է 45,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք սննդի հատկացում:<br>***<u>Կոտայքի մարզ</u>***՝ - 110 շահառու: Համայնքներ՝ քաղ. Աբովյան - 38 երեխա, քաղ. Չարենցավան - 13 երեխա, գյուղ Սևաբերդ - 41 երեխա, գյուղ Չորաղբյուր -18 երեխա: Նախատեսվում է 56,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***<u>Գեղարքունիքի մարզ</u>***՝ - 804 շահառու: Համայնքներ՝ քաղ. Գավառ - 61 երեխա, գյուղ Գետիկ - 74 երեխա, գյուղ Մարտունի - 73 երեխա, գյուղ Այգուտ - 164 երեխա, գյուղ Անտառամեջ - 22 երեխա, գյուղ Չորավանք - 31 երեխա, գյուղ Դպրաբակ - 81 երեխա, գյուղ Կալավան - 23 երեխա, գյուղ Վահան - 188 երեխա, գյուղ Բարեպատ - 6 երեխա, գյուղ Թթուջուր - 81 երեխա: Նախատեսվում է 410,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***<u>Տաուշի մարզ</u>***՝ - 33 շահառու: Համայնքներ՝ քաղ. Իջևան - 18 երեխա, քաղ. Դիլիջան -15 երեխա: Նախատեսվում է 17,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***<u>Լոռու մարզ</u>***՝ - 48 շահառու: քաղ. Վանաձոր - 48 երեխա: Նախատեսվում է 24,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***<u>Արմավիրի մարզ</u>***՝ - 51 շահառու: գյուղ. Արտաշար - 51 երեխա: Նախատեսվում է 26,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>2. ***Ապրանքների բաշխում նշված շահառուներին***՝ 600,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>3. ***Բուժօգնություն ստանալու միջամտություն***՝ 140,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>4. ***Ուսման վարձի հատկացում***՝ 69,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:<br>5. ***Կազմակերպական ծախսեր***՝ 542,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. ***<u>Սննդի ձեռքբերում և ներմուծում</u>***՝ 2,268,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի տոմատի մածուկ, բուսական յուղ, բրինձ, շաքարավազ, հնդկացորեն, ալյուր, մակարոնային արտադրանք և պարենային այլ ապրանքներ:<br>2. ***<u>Ապրանքների ձեռք բերում և ներմուծում</u>***՝ մինչև 500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի բժշկական գործիքներ, բժշկական սարքավորումներ, ատամնաբուժական աթոռներ (տրվում է այն բուժ. հաստատություններին, որոնք կդիմեն դրանք հատկացնելու խնդրանքով), օրացույցներ և բացիկներ, խաղալիքներ, կենցաղային տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, հագուստ, սպասքեղեն և այլ պարագաներ, շինանյութ, գյուղատնտեսական նշանակության ապրանքներ):<br>3. ***<u>Բուժօգնություն ստանալու միջամտություն</u>***՝ 140,000 ԱՄՆ-ի դոլարի համարժեք դրամի չափով՝ հիմնադրամի սոցիալապես անապահով այն շահառուներին, ովքեր կդիմեն բժշկական օգնություն ստանալու, դեղորայքի գումարի տրամադրման, վիրահատման գումարի հատկացման, տարբեր տեսակի բժշկական միջամտությունների խնդրանքով, «Հույսի ափան» թաղամասում գործող ատամնաբուժարանին հատկացվող բուժանյութերի գնում, ընդ որում մինչև 10 տարեկան երեխաները ծառայություններից օգտվում են անվճար:<br>4. ***<u>Ուսման վարձի հատկացում</u>***՝ 69,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի այն շահառուներին, ովքեր կդիմեն ուսման վարձ հատկացնելու խնդրանքով:<br>5. ***Կազմակերպական ծախսեր***՝ 542,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ |

3

| | | |
|---|---|---|
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | ***<u>Կազմակերպական ծախսերը</u>***՝ 542,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որը կազմում է բյուջեի 15,4 %-ը:<br>1. Աուդիտորական ծառայություն՝ 4,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>2. Աշխատավարձ՝ 452,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>3. Վառելանյութ՝ 33,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>4. Էլեկտրաէներգիայի վարձ՝ 12,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>5. Ջրի վարձ՝ 1,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>6. Գազի վարձ՝ 10,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>7. Հեռախոսավարձ և կապ՝ 15,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>8. Տնտեսական այլ ծախսեր՝ 15,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզպետարաններ, գյուղապետարաններ, համայնքային սոցիալական ծառայություններ: |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամի, Գերմանիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամի, «Ս[illegible]» բարեգործական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ <u>«Դիակոնիա» բ/հ-ի տնօրենի տեղակալ Վ. Ավագյան</u>
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1414-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/40385-15 ու դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40590-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱԿ/22.2/14513-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «AmeriCares» հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (2 տեղ, 166 կգ ընդհանուր քաշով, 791,562.93 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,081 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1415-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 07/80-2/38654-15 և դեկտեմբերի 8-ի N 06/3-3/38982-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարմարե մշակված բազրիքասյուները և շրիշակը (4 տեղ, 2,340 կգ ընդհանուր քաշով, 8,644.72 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 595,000 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1416-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40824-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41108-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մանկապարտեզի մանկական մահճակալները (100 հատ՝ 100 տեղ, 3,100 կգ ընդհանուր քաշով, 450,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1417-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-866-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 07/80-2/39503-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39985-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվող «ՆՈՒՌ - Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագրի մասին» N Մ-866-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1143-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի մարտի 31-ը:

2. Սահմանել, որ «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգչային մասերը (մեկ տեղ, 16.6 կգ ընդհանուր քաշով, 7,970 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 410 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1418-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/39879-15 և դեկտեմբերի 11-ի N 06/3-3/39721-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էկոմիքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255701) 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի և գործիքների ձեռքբերում՝ 7,752,760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1419-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 07/80-2/38750-15 և դեկտեմբերի 3-ի N 06/3-3/38253-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հիդրոիզոլիացիա - Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N 15-03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի պահակատան վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 3,253,442 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հիդրոիզոլիացիա - Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N 15-06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է



ճամբարի N 1 ննջարանային մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 77,539,840 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հիդրոիզոլիացիա - Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N 15-07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի N 2 ննջարանային մասնաշենքի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 8,072,910 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1420-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/40018-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-4/40051-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էմ էքս պրոսերվ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01249718) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցանցային սարքավորումների ձեռքբերում՝ 216,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1421-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-094-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/40020-14 և դեկտեմբերի 11-ի N 06/3-3/39799-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-094-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1197-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «մինչև 2015 թվականի օգոստոսի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի օգոստոսի 31-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 65,192,634 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1422-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/37826-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/37817-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին ենթակետում «3,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «4,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) 6-րդ ենթակետում «10,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «8,700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01223655) 2015 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆինանսական հաշվետվությունների և դրանց կից ծանոթագրությունների անկախ աուդիտի իրականացում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1423-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-717-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38095-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/37825-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Խաղադաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-717-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «328,098,000 դրամ» բառերը փոխարինել «300,440,040 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Edel Grass B.V.» ընկերության հետ (Pr. Beatrixstraat 3, 8280 AD Genemuiden, Netherlands) 2015 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված՝ N Rev 004 պայմանագրի N 62080430ED և N 62070430ED նախահաշիվներում նշված գործարքները, որոնցով նախատեսվում են արհեստական խոտածածկերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 19,800 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և 17,062.50 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

16/12.21

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից
«10» դեկտեմբերի 2015թ.

# ԾՐԱԳԻՐ
«Խաղադաշտերի կառուցում»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացման նպատակով Երևանի և Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցների տարածքներում արհեստական խոտածածկով խաղադաշտերի կառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի Ավան, Աճառյան 35/31 և Վանաձոր քաղաքի Տարոն 4 թաղամասի Սեբաստի 6 հասցեներում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 300,440,040 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի և Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի հուլիսի 10-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Արհեստական խոտածածկի, անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ներմուծում՝ 189,988,000 դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, հուլիսի 10-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 31-ը:<br>2. Խաղադաշտերի կառուցմապատման աշխատանքների իրականացում 90,912,040 դրամ՝ 2015 թվականի հուլիսի 10-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը:<br>3. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ՝ 19,540,000 դրամ, 2015 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2016 թվականի մայիսի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Հողային աշխատանքներ, դրենաժային համակարգով մարզադաշտերի կառուցում, հենապատերի և ցանկապատերի կառուցում՝ 90,912,040 դրամ,<br>- Արհեստական խոտածածկերի՝ 154,330 եվրոյին համարժեք դրամ (բեռնափոխադրման ծախսերը կազմել են 11,800 եվրոյին համարժեք դրամ), խոտածածկերի տեղադրման համար անհրաժեշտ նյութերի և խնամքի սարքավորումների՝ 55,830.50 եվրոյին համարժեք դրամ (բեռնափոխադրման ծախսերը կազմել են 4,530.63 եվրոյին համարժեք դրամ), կաուչուկի (ռետինե գնդիկներ)՝ 38,000 եվրոյին համարժեք դրամ (բեռնափոխադրման ծախսերը կազմել են 56,000 եվրոյին համարժեք դրամ), ռետինապատ ալյումինե ցանցի՝ 25,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (բեռնափոխադրման ծախսերը կազմել են 3,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ), կվարցային ավազի՝ 12,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ բեռնափոխադրումը), ներմուծում<br>- Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքներ՝ 36,862.50 եվրոյին համարժեք դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի և Վանաձորի քաղաքապետարանների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

Կազմեց՝ Ֆին[illegible] բաժնի պետ [illegible]րզ Պապիկյան ------------------------

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1424-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1033-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 07/80-2/40481-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40569-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ստեփան Շահումյանի անվան մարզադաշտի և ենթակառույցների վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-1033-Ա որոշման մեջ և կից ծրագրում (2015 թվականի նոյեմբերի 5-ի N Մ-1175-Ա որոշման խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «225,195,075 դրամ» բառերը փոխարինել «245,092,307 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ և կից ծրագրի 9-րդ ու 10-րդ կետերում «131,046,918 դրամ» բառերը փոխարինել «150,944,150 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1425-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1056-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 07/80-2/40019-15 և դեկտեմբերի 15-ի N 06/3-3/40264-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-664-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» N Մ-1056-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «2014 թվականի հուլիսի 18-ի N Մ-664-Ա» բառերը փոխարինել «2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-717-Ա» բառերով.

2) որոշման 1-ին կետում «2014 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վանաձորի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-664-Ա» բառերը փոխարինել «2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Խաղադաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-717-Ա» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1426-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1247-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/40243-15 և դեկտեմբերի 15-ի N 06/3-3/40268-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-717-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» N Մ-1247-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-717-Ա» բառերը փոխարինել «2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-133-Ա» բառերով.

2) որոշման 1-ին կետում «2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Խաղադաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-717-Ա» բառերը փոխարինել «2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-133-Ա» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1427-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/40978-15 և դեկտեմբերի 17-ի N 06/3-3/40702-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 096 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա և 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-900-Ա որոշումների խմբագրությամբ) իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի հունիսի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Տաշիրի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1428 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38804-15 և N 06/3-3/38835-15 ու Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N ՍԿ/ԱՊ-2/8594-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ցորենի և եգիպտացորենի բարելավման միջազգային կենտրոնի (SIMMYT) կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հայցեով ստացված բեռի (աշնանացան ցորենի համաշխարհային հավաքածու՝ 5 տեղ, 33.8 կգ ընդհանուր քաշով, 5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 101.40 եվրո, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ              Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1429 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 07/80-2/38798-15 և N 06/3-3/38837-15 ու Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 9-ի N ՍԿ/ԱՊ-2/8595-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնի (ICARDA) կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռների (հատիկաընդեղենային մշակաբույսերի համաշխարհային հավաքածուներ՝ 3 տեղ, 34.3 կգ ընդհանուր քաշով, 8 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ և աշնանացան գարի՝ 1 տեղ, 4.6 կգ ընդհանուր քաշով, 1 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1430 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41333-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41186-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14810-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (շարժական ավտոկլավ՝ 1տեղ, 103 կգ ընդհանուր քաշով, 412,820 ճապոնական իենին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 910.16 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1431 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41336-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41173-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14816-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ախտորոշիչ թեստեր՝ 2 տեղ, 11.6 կգ ընդհանուր քաշով, 3,067 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 525 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1432 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41334-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41174-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14815-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ծախսանյութեր՝ 2 տեղ, 52 կգ ընդհանուր քաշով, 6,010.35 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 505.45 շվեյցարական ֆրանկ, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1433 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՅՈՒՆՅԱՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/40390-15 և N 06/3-3/40266-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ԱՄ/22.2/14501-15 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 01/6215-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Աջակցություն ինքնորոշված Արցախին» միավորման կողմից աջակցության նպատակով «Սյունյաց նախադպրոցականներ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բժշկական սարքերի (3,120 կգ ընդհանուր քաշով, 5,050 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Սյունիքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բժշկական սարքերն անհատույց հանձնվելու են «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. «Սյունյաց նախադպրոցականներ» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռը «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հանձնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1434 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 07/80-2/40304-15 և N 06/3-3/40263-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 01/14/15688-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 03/07-1/15118-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ՖԲ/ԱՆՄ-2-1/11266-15 և Երևանի քաղաքապետարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 02/34-66274Հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,572,846 դրամ արժեքությամբ «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից (ՀՀ, ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող. 1-ին նրբ., տուն 14/16-1, ՀՎՀՀ՝ 01242562) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի) Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի մարտի 1-ին կնքված՝ N Կ 012 0309.7867 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի մատակարարում՝ տարեկան 1,012,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի մարտի 24-ին կնքված՝ N 01-0017-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 165,356 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 84,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված՝ N 262051 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 280,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2015 թվականի հոկտեմբերի 5-ին կնքված՝ N Կ 01-0184 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցում (տարեկան 2 անգամ)՝ 31,490 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի

տնօրեն__________________ Ե.Կիրակոսյանի կողմից

«21» դեկտեմբեր 2015 թ.

# «ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագրի նպատակն է՝<br><br>«Ջերմիկ անկյուն խմբային տան» ծրագրի նպատակն է՝ միայնակ, խնամքի կարիք ունեցող հաշմանդամների կենսապահովման նվազագույն պայմանների և կացարանի ապահովումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ կառավարության 2013թ.-ի հունվարի 16 –ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի «Բ» ենթակետով նախատեսվող հարկային արտոնությունների ստացում: |
| 3. | Բարեգործը | «Ջերմիկ անկյան բարեկամներ» ինկորպորացիա<br>հասցե՝ ԱՄՆ, 1037, Արիզոնա 85280 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից<br>Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն , ՀՎՀՀ 01242562 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվում է Հայաստանում՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանում Սիլիկյան թաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1տուն հասցեում, բնագավառը՝ սոցիալական: |

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1 572 846 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր քառասունվեց ) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ջերմիկ անկյուն» խմբային տան բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք: Ներկայումս խմբային տանը բնակվում են 14 երիտասարդներ (5 տղա և 9 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 կրթահամալիրներից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 01 հունվար 2016թ. – 31 դեկտեմբեր 2016թ. (շարունակելի): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Ջերմիկ անկյուն» խմբային տան գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1572846 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր քառասունվեց) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) որից՝ գազ -1012000 դրամ, ջուր -165356դրամ, էլեկտրաէներգիա -280000դրամ, հեռախոսակապ – 84000դրամ, գազի սպասարկում- 31 490դրամ: Ծրագրի շրջանակներում միջոցառումները նախատեսվում է իրականացնել 01.01.2016-31.12.2016 ընկած ժամանակահատվածի ընթացքում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է հարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով՝<br><br>• Պայմանագիր կնքված գազի (01.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 9200 խ.մ. (1012000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրոէներգիայի (03.12.2014թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 11200 կվտ.ժ. (280000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի (20.02.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 84000 դրամ՝ առանց ԱԱՀ –ի և ջրի (24.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140խ.մ. (165356դրամ՝ առանց ԱԱՀ-ի) սպասարկման գրասենյակների մատակարարման և սպասարկման դիմաց վճարների, գազապատման կենցաղային համակարգի տեխնիկական |

| | | |
|---|---|---|
| | | ապասարկման և իրահանգավորման ծառայությունների (05.10.2015թ.-3 տարի ժամկետով ), որի տարեկան ծախսը կազմում է 31 490 դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Անմիջականորեն շահառուների սպառմանը չուղղված ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևան քաղաքի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ : |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Ջերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում դոնոր կազմակերպությանը:<br><br>• Ծրագրի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով հաշվետվություն կներկայացվի նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1435-Ա**
**քաղ. Երևան**

**«ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 07/80-2/-4211715 և դեկտեմբերի 24-ի N 06/3-3/41953-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 02/14/16125-15, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 05/14.1/6704-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/18.1/7463-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N 01/6383-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 960 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

լիբանանյան «DW5 International sal» ընկերության հետ (Tannous Building - Building 3rd Floor, Street 56 - Jisr Sector 77, Beirut 2077 7209 Lebanon) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճարտարապետական, ինժեներական և ներքին հարդարման դիզայնի ծառայությունների մատուցում՝ 366,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սիմոնյան կրթական հիմնադրամի

գլխավոր տնօրեն Մարի Լու Փափազյանի կողմից

«22» Դեկտեմբերի 2015թ.

# ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ Գյումրի քաղաքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով հին թատրոնի շենքի և հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը իրականացվելու է տարբեր ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16, գրանցման թիվ 222.160.01143, վկայական 03Ա086142) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ք.Գյումրի, Շչորսի փողոց թիվ 1 հասցեում, քաղաքաշինության ոլորտում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 960000000 (ինը հարյուր վաթսուն միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուն է՝ Գյումրու համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է մեկ փուլով 2015թ-ի նոյեմբերի 1-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում – 200000000 (երկու հարյուր միլիոն) դրամ՝ 01.11.2015-ից մինչև 31.12.2017թ-ը,<br>2<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում – 660 000 000 (վեց հարյուր վաթսուն միլիոն) դրամ՝01.04.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և գրանցման աշխատանքների իրականացում– 80000000 (ութսուն միլիոն) դրամ՝ 01.04.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ – 12000000 (տասներկու միլիոն) դրամ՝ 01.01.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Գործուղման ծախսեր – 6000000 (վեց միլիոն) դրամ՝ 01.01.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Գրասենյակային և այլ ծախսեր – 2000000 (երկու միլիոն) դրամ՝ 01.01.2016-ից մինչև 31.12.2020թ-ը, |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից - 15000000 (տասնհինգ միլիոն) դրամ՝ 01.11.2015-ից մինչև 31.12.2017թ-ը,<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում արտերկրից - 185000000 (մեկ հարյուր ութսունհինգ միլիոն) դրամ՝ 01.11.2015-ից մինչև 31.12.2017թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 330000000 (երեք հարյուր երեսուն միլիոն) դրամ՝01.04.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք բերում արտերկրից – 330000000 (երեք հարյուր երեսուն միլիոն) դրամ՝01.04.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողության, խորհրդատվական և փաստագրման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից |

| | | |
|---|---|---|
| | | - 60000000 (վաթսուն միլիոն) դրամ՝ 01.04.2016-ից մինչև 31.12.2020թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում արտերկրից - 20000000 (քսան միլիոն) դրամ՝ 01.04.2016-ից մինչև 31.12.2020թ-ը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ – 12000000 (տասներկու միլիոն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը,<br>• Գործուղման ծախսեր – 6000000 (վեց միլիոն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը,<br>• Գրասենյակային և այլ ծախսեր – 2000000 (երկու միլիոն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Աշխատանքային նախագծերը պետք է համաձայնեցվեն ՀՀ Մշակույթի նախարարության հետ: Իրականացվելիք աշխատանքների ընթացքում համագործակցություն է նախատեսվում նաև Գյումրու քաղաքապետարանի և ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1436-Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 07/80-2/40826-15 ու դեկտեմբերի 11-ի N 06/3-3/39801-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 02/14/15358-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N ԱՄ/22.2/13615-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ՝ 02507911) իրականացվող՝ 1,400,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջություն երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետություն առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի մանկական ասոցիացիա»ԲՀԿ-ի
նախագահ Վ[illegible] Սեդրակյանի կողմից
«16»նոեմբերի 2015.թ.

# Առողջություն երեխաների ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա»ԲՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող ծրագրի նպատակն է Հայաստանի և Արցախի հիվանդ և հաշմանդամ երեխաների առողջության անվճար վերականգնումը, որոնց բուժումը հնարավոր չէ իրականացնել Հայաստանում: |
| 2. | Ծրագրի բարեգործական ոսկման նպատակը | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Գերմանիա, Օբեռհաուզեն, Լանտեռշտրասսե 21,Դինսլակեն: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը /ՀՀ, Ք. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ02507911/ , Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության հետ համատեղ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններում՝ առողջապահության բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի թռիչքի 5 տարվա արժեքը գերմանական կողմի ֆինանսավորմամբ 1400000 եվրո է, տարեկան՝ 280000 եվրո, որը ինքնաթիռի երկու անգամ վարձակալման ծախսերն է/օգոստոս և փետրվար/ ամիսներին, երեխաների հետվիրահատական բուժման համար բերվող դեղամիջոցների և բուժ պարագաներ 5տարվա համար 100000եվրո, անհրաժեշտ գույք և տրանսպորտային միջոց 5տարվա համար 50000եվրո, ՀՄԱ-ի վերականգնողական կենտրոնի և ՀՀ հեռավոր մարզերի կլինիկաների համար բուժսարքավորումներ 5տարվա համար |

2

| | | |
|---|---|---|
| | | 50000 եվրո: Ընդհանուր ծրագրի արժեքն է 5 տարվա համար 1600000 եվրոին համարժեք դրամ և հեռախոսակապի, էլեկտրական էներգիայի, գազի մատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման 5տարվա համար ծախսերը 8700000դրամ:<br>Բոլոր կազմակերպչական ծախսերը իրականացնում է Գերմանիայի <<Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ>> կազմակերպությունը, բոլոր վիրահատությունները Եվրոպական կլինիկաների կողմից իրականացվում է անվճար: Ծախսերը 5տարվա համար կազմում է 1600000եվրոին համարժեք դրամ, և ՀՄԱ-ի ծախսերը 8700000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում և ԼՂՀ-ում գերմանացի բժիշկ մասնագետների կողմից եվրոպական կլինիկաներում բուժման և վիրահատության համար ընտրված հիվանդ և հաշմանդամ երեխաները, ըստ մեր բժիշկների կողմից ներկայացրած հիվանդությունների ախտորոշումների: «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության մանկական վերականգնողական կենտրոնի շահառու երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ-ի հունվարի 1-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը իրականացվում է և բարեգործական է ճանաչվել 1994թ-ից, որի արդյունքում վիրահատվել է 197 երեխա ՀՀ բոլոր մարզերից և Արցախից: Յուրաքանչյուր տարվա փետրվար և օգոստոս ամիսներին գերմանական կողմից վարձակալած ինքնաթիռով, ինչպես համատեղ բուժհանձնաժողովի կողմից ընտրված երեխաները մեկնում են բուժման եվրոպական կլինիկաներ հայ, վրացի աղվան, դրոզ, տաջիկ, ուզբեկ և ղազախ երեխաներ և նույն ինքնաթիռով վերադառնում են արդեն վիրահատված և բուժված երեխաները:Սա միջազգային ծրագիր է և յուրաքանչյուր երկրում կազմակերպվում է օդանավի անվճար թռիչքի, վայրէջքի,կայանման և սպասարկման |

| | | |
|---|---|---|
| | | ծառայությունները/բացառությամբ բենզինի լիցքավորման/: Երեխաների թիվը փոփոխական է մինչև 15 երեխա: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ծավալը կազմում է 1600000եվրոին համարժեք դրամ, և ՀՄԱ-ի ծախսերը 8700000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երեխաներին Գերմանիա բուժման տանող և բերող ինքնաթիռի թռիչքի, վայրեջքի և վերգետնյա ծառայությունների անվճար կազմակերպում՝/բացառությամբ վառելիքի լիցքավորումը գերմանական կողմի հաշվին /: Գերմանացի բժիշկների և Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալի աշխատակիցների աշխատանքները ՀՀ-ում կազմակերպելու համար գերմանական կողմից ուղարկվող երեխաների հետվիրահատական բուժման համար անհրաժետ դեղորայքի և բուժ. պարագաների 5 տարվա համար 100000եվրոյին համարժեք դրամ, անհրաժեշտ գույքի և տրանսպորտային միջոցի 5 տարվա համար 50000եվրոին համարժեք դրամ, կահույքի և հումանիտար օգնության բեռների,/բուժսարքավորումներ և բուժպարագաներ 5 տարվա համար 50000 եվրոին համարժեք դրամ, որոնք նախատեսվում են ՀՀ հեռավոր շրջանների կլինիկաների համար: Նշված հումանիտար օգնության պահեստավորում և անվճար մաքսազերծում: Բուժման մեկնող հիվանդ երեխաներին և 2 ուղեկցողներին օդային տուրքի վճարից ազատում, տարեկան 2 անգամ: «Արմենթելի» ՀՁ ՓԲԸ-ի կողմից հեռախոսակապի 5 տարվա համար 2400000դրամ, և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման 5տարվա համար 1800000դրամ, «Հայռուսգազարդ»ՓԲԸ- ի կողմից բնական գազի մատակարարման 5 տարվա համար 4200000դրամ, և «Երևան ջուր»ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար 5տարին 300000դրամ:Ընդհանուր կազմակերպչական ծախսերը 5 տարվա համար 8700000դրամ է, տարեկան՝ 1740000դրամ: Նշված ծախսերի ԱԱՀ-ից ազատում 5 տարվա համար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված | «Արմենթելի» ՀՁ ՓԲԸ-ի կողմից հեռախոսակապի 5 տարվա համար |



| | | |
|---|---|---|
| | կազմակերպական ծախսերը | 2400000դրամ, և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման 5տարվա համար 1800000դրամ, «Հայռուսգազարդ»ՓԲԸ- ի կողմից բնական գազի մատակարարման 5 տարվա համար 4200000դրամ, և «Երևան ջուր»ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար 5տարին 300000դրամ:Ընդհանուր կազմակերպչական ծախսերը 5 տարվա համար 8700000դրամ է, տարեկան՝ 1740000դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է համագործակցություն Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների առողջապահության նախարարությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1437-Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41516-15 և դեկտեմբերի 15-ի N 06/3-3/40256-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 02/14/15357-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10442-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ՝ 02507911) իրականացվող՝ 600,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Ամանորյա նվերներ հայ երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի մանկական ասոցիացիա» ԲՀԿ-ի
Նախագահի Վարդուհի Մեսրոպյանի կողմից
«16» դեկտեմբերի 2015.թ.

«Ամանորի նվերներ հայ երեխաներին»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող ծրագրի նպատակն է Հայաստանի հաշմանդամ, հիվանդ և ծնողազուրկ երեխաներին ամանորյա նվերների բաշխումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսում ենք ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպություն, հասցեն՝ Գերմանիա, Օբեռհաուզեն, Լանտեռշթրասե 21,Դինսլակեն: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը /ՀՀ, Ք. Երևան, Տիգրան Մեծի 51, ՀՎՀՀ02507911/ , Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության հետ համատեղ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի հանրապետությունում՝ սոցիալական բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագիրը ֆինանսավորում է գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպությունը: Ծրագրի բյուջեն կազմում է տարեկան 120000եվրո և 5 տարվա համար 600000եվրո, որը ծախսվում է օդային տրանսպորտով օգնությունը Հայաստան տեղափոխման համար: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ապրող հիվանդ, հաշմանդամ, ծնողազուրկ, զաղթական և անապահով ընտանիքների երեխաներն են «Հայաստանի |



| | | |
|---|---|---|
| | | մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ներկայացրած <<ՀԿ-ներ և ՅՈՒՆԻՍԵՖ երեխաների պաշտպանության Ազգային ցանցի>> կողմից հաստատված շահառուների ցուցակի: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ-ի հունվարի 1-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը իրականացվում է և բարեգործական է ճանաչվել 1994թ-ից: Յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսին գերմանական կողմից վարձակալած ինքնաթիռով 120000 եվրո/վանձակալման արժեքը/ առաքվում է մարդասիրական օգնության բեռներ, որոնք ուղարկվում են գերմանական ընտանիքների կողմից: Ողջ բեռի համար նշվում է սիմվոլիկ 100 եվրո արժեք, քանի որ արկղները գերմանացի ժողովրդի անձնական նվիրատվությունն է մեր երեխաներին: Օգնությունը բաշխվում է դեկտեմբեր և հունվար ամիսներին համաձայն շահառուների ցուցակի, որը կցվում է: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ժամանող ինքնաթիռի թռիչքի, վայրէջքի և վերգետնյա ծառայությունների կազմակերպում՝/բացառությամբ վառելիքի լիցքավորումը գերմանական կողմի հաշվին /, ուղարկվող բեռների /ամանորի նվերների արկղեր, որոնք պարունակում են սնունդ /միատեսակ տուփերով և արտադրության ալյուր, շաքարավազ, մակարոնեղեն, բրինձ, ռսպ, շոկոլադե սալիկներ, պահածո կոմպոտներ, կարամել և թխվածքաբլիթներ/ , հագուստ, հիգենիկ պարագաներ, խաղալիքներ/ մաքսային ձևակերպումների անվճար իրականացում, պահեստավորում և անհատույց բաշխում: Այս բոլոր ապրանքները գերմանացի ընտանիքները ձեռք են բերում կազմակերպության կողմից նշված ցուցակներով և ողջ ակցիայի և օգնության համար արժեքներ չեն սահմանում: Ողջ բեռի համար նշվում է սիմվոլիկ 100 եվրո արժեք, քանի որ արկղները գերմանացի ժողովրդի անձնական նվիրատվությունն է մեր երեխաներին: Արկղերի քանակությունը ըստ |

| | | |
|---|---|---|
| | | տարիների փոփոխական է: Շահառուների ցուցակը և արկղերի քանակությունը ծրագրին կցվում է: Օգնության տեղափոխման տրանսպորտային ծախսերը կազմում են 120000եվրո: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի հետ կապված կազմակերպական ծախսերը կատարվելու են Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի հետ կապված կազմակերպական ծախսերը միայն օգնության տրանսպորտային ծախսերն են: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է համագործակցություն ՀՀ-ում ՀԿ-ներ և ՅՈՒՆԻՍԵՖ երեխաների պաշտպանության ազգային ցանցի հետ, իր 78 ցանցի անդամ հկ-ներով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1438-Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՌԴԱ» ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՐԱԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41337-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/40979-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 02/14/15834-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱԱ/22.2/14807-15 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 01/6422-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Գյումրի, Մովսես Խորենացու 19, ՀՎՀՀ՝ 05531591) իրականացվող՝ 363,300,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2015 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 113103315 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 260,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ N 120648 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 540,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 02108133528 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 2,040,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2013 թվականի հուլիսի 2-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016-2020 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 70,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Գյումրու «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման
կենտրոն բարեգործական հիմնադրամի
տնօրեն Ա. Դարբինյանի կողմից

«23» դեկտեմբերի 2015թ.

## «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի սակավապահովված ընտանիքներին, ծնողազուրկ երեխաններին, մանկատներին, ծերանոցներին անվճար բուժսպասարկում, ատամնաբուժական և ակնաբուժական ծառայությունների մատուցում, դեղորայքի անվճար տրամադրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | <ԱՌԴԱ> բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Պ. Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 4. | Ծրագիրը կատարողը | <Գյումրու <ԱՌԴԱ> առողջապահական և աջակցման կենտրոն> բարեգործական հիմնադրամ (ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Մ. Խորենացի 19, ՀՎՀՀ՝ 05531591): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Գյումրի՝ առողջապահության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 363,300,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շիրակի մարզի Գյումրի քաղաքի սակավապահովված ընտանիքներ, ծնողազուրկ երեխաներ, մանկատան սաներ և միայնակ ծերեր:<br>Տարեկան սպասարկվելու է շուրջ 1400 շահառու: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:<br>Ծրագիրը շարունակական է, այն իրականացվում է սկսած 2006 թվականից: |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Անվճար բժշկական ծառայությունների (էլեկտրասրտագրում, ուլտրաձայնային ախտորոշում, բիոքիմիական-կլինիկական լաբորատոր ծառայություններ, գինեկոլոգիական, ակնաբուժական ծառայություններ) մատուցում և դեղորայքի տրամադրում, որի համար նախատեսվում է.<br>• Բժշկական սարքավորումների, պարագաների և դեղորայքի ներմուծում և ձեռքբերում – 331,250,000 դրամ.<br>• Գրասենյակային, վարչական և կոմունալ ծախսեր – 32,050,000 դրամ. |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • Բժշկական սարքավորումների, գույքի ձեռքբերում (ներմուծում) – 92,500,000 դրամ, տարեկան 18,500,000 դրամ.<br>• Բժշկական պարագաների ձեռքբերում (ներմուծում) - 50,000,000 դրամ, տարեկան 10,000,000 դրամ.<br>• Դեղորայքի ձեռքբերում (ներմուծում) – 40,000,000 դրամ, տարեկան 8,000,000 դրամ.<br>• Գրասենյակային և վարչական ծախսեր – 14,500,000 դրամ, տարեկան 2,900,000 դրամ.<br>• Կոմունալ ծախսեր – 14,550,000 դրամ, տարեկան 2,910,000 դրամ.<br>• Ֆինանսական գործունեության աուդիտի ծախսեր – 3,000,000 դրամ, տարեկան 600,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Գրասենյակային և վարչական ծախսեր – 14,500,000 դրամ<br>• Կոմունալ ծախսեր – 14,550,000 դրամ<br>• Ֆինանսական գործունեության աուդիտի ծախսեր 3,000,000 դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման, վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1439-Ա**
**քաղ. Երևան**

## «ԷՅ ԹԻ ՓԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/41845-15 և դեկտեմբերի 22-ի N 06/3-3/41466-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/14/15269-15, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 1/22.2/12666-15, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N ՍԿ/ԱՊ-2/8784-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 03/07-1/14904-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տպագրիչների 9, բն. 55, ՀՎՀՀ՝ 02554563) իրականացվող՝ 168,800,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի տնօրեն
Լուսինե Կարապետյանի կողմից

«21» դեկտեմբերի 2015 թ.

«Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում
ծառատունկի իրականացում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Հայաստանի և Արցախի քաղաքային և գյուղական համայնքներում բնապահպանական իրավիճակի բարելավում, շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրերի իրականացում, դպրոցականների, ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների կազմակերպում և իրականացում, անտառատընկման աշխատանքների իրականացում: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | «Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամ («Armenia tree project» Charitable Foundation (ATP) Հայկական համագումարի անդամ կազմակերպություն – ԱՄՆ, 65 Main Street, Watertown, MA 02472) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Արշակունյաց 57/5, իրավաբանական հասցեն՝ Տպագրիչների 9, բն 55, ՀՎՀՀ՝ 02554563): |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն բնապահպանության բնագավառ: |



| | | |
|---|---|---|
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 168,800,000 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբեր 30-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | • Հիմնադրամի Մարգահովտի և Կարինի կրթական կենտրոններում դպրոցականների ու ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների կազմակերպում և իրականացում, կրթական ծրագրի անհրաժեշտ ուսումնական նյութերի տպագրում, տեղեկատվական, բուկլետների և թռուցիկների, ցուցանակների պատրաստում, <Միտք սերմանիր, ծառ տնկիր> գրքի վերամշակում և վերահրատարակում (գիրքը մշակվել է համատեղ Կրթության ազգային ինստիտուտի հետ), - 15,500,000 դրամ (տարեկան 3,100,000 դրամ)<br>• Հիմնադրամի Մարգահովտի և Կարինի կրթական կենտրոններում դպրոցականների ու ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների , իրականացման համար կենցաղային (ծրագրային) ծախսեր – 7,500,000 դրամ (տարեկան 1,500,000 դրամ)<br>• 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը.<br>• Արագածոտնի մարզի Կարին, Արարատի մարզի Խաչփար և Լոռու մարզի Մարգահովիտ գյուղերում գործող հիմնադրամին պատկանող տնկարաններում տնկանյութերի աճեցում – 28,000,000 դրամ (տարեկան 5,600,000 դրամ, այդ թվում գազապասարկման և էլեկտրաէներգիայի ծախսեր)<br>• 2016 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>• 2017 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>• 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը.<br>• 2019 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը.<br>• 2020 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը.<br>• ՀՀ և ԼՂՀ քաղաքային և գյուղական համայնքներում ծառատունկի իրականացում 91,000,000 դրամ (տարեկան 18,200,000 դրամ) |

| | | |
|---|---|---|
| | | 1. ցանկապատի ցցերի, ցանցերի, փշալարի և օժանդակ նյութերի ձեռքբերում - 30,000,000 դրամ<br>2. երկու կիսաբեռնատար և մեկ ամենագնաց տրանսպորտային միջոցների ձեռքբերում - 48,000,000 դրամ (30,000,000 դրամ երկու կիսաբեռնատար, 18,000,000 դրամ մեկ ամենագնաց, ներկայացված 5 տարվա ծրագրի ավարտից հետո կազմակերպության սեփականություն հանդիսացող ձեռք բերվելիք 2 ամենագնաց կիսաբեռնատար և 1 ամենագնաց մեքենաները ծառայելու են ծրագրի հետագա գործունեությանը և զարգացմանը),<br>3. տրանսպորտային միջոցների պահեստամասերի ձեռքբերման և վերանորոգման ծախսեր – 10,000,000 դրամ,<br>4. ավտովառելիքի ձեռքբերում - 3,000,000 դրամ<br><br>- 2016 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը - հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2017 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը - հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2018 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը - հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2019 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը - հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2020 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը - հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը, |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | • տնկարանների համար գյուղատնտեսական գործիքների և սարքավորումների ձեռքբերում – 11,000,000 դրամ,<br>• շինանյութերի ձեռքբերում – 12,000,000 դրամ,<br>• բուժանյութերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների ձեռքբերում – 1,000,000 դրամ,<br>• ոռոգման ջրագծերի խողովակների և օժանդակ նյութերի ձեռքբերում – 4,000,000 դրամ,<br>• ցանկապատի ցցերի, ցանցերի, փշալարի և օժանդակ նյութերի ձեռքբերում - 30,000,000 դրամ |



| | | |
|---|---|---|
| | | • շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների նյութերի և <Միտք սերմանիր, ծառ տնկիր> գրքի տպագրում – 3,500,000 դրամ,<br>• շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրի դպրոցականների դասընթացների անցկացման սննդի ձեռքբերում – 5,000,000 դրամ,<br>• ուսումնական կենտրոնների համար գույքի և կահույքի ձեռքբերում – 2,000,000 դրամ,<br>• երկու կիսաբեռնատար և մեկ ամենագնաց տրանսպորտային միջոցների ձեռքբերում - 48,000,000 դրամ,<br>• տրանսպորտային միջոցների պահեստամասերի ձեռքբերման և վերանորոգման ծախսեր – 10,000,000 դրամ,<br>• ավտովառելիքի ձեռքբերում - 3,000,000 դրամ,<br>• համակարգչային տեխնիկայի ձեռքբերում - 5,000,000 դրամ:<br>• կենցաղային (գազասպասարկման և էլեկտրաէներգիայի) ծախսեր – 7,500,000 դրամ<br>• կազմակերպչական ծախսեր 26,800,000 դրամ (5 տարվա համար բացվածքը տես 11-րդ կետում) |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Ընդամենը՝ 26,800,000 դրամ (5 տարվա համար)<br><br>• ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացում - 7,000,000 դրամ,<br>• գրասենյակային նյութերի և պարագաների ձեռքբերում - 5,000,000 դրամ,<br>• կոմունալ ծախսեր (Երևանի գրասենյակ) – 7,000,000 դրամ,<br>• հեռախոսակապի ծառայություն - 7,800,000 դրամ: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ (ԿԱԻ) ՓԲԸ՝ կրթական ձեռնարկների մշակում:<br>ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և «Հայանտառ» ՊՈԱԿ՝ տնկիների, ցանկապատի նյութերի (փայտանյութ) ձեռքբերում, համատեղ անտառատնկման աշխատանքների իրականացում: |

| | | |
|---|---|---|
| **13.** | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Բարեգործի կողմից իրականացվող պարբերական մշտադիտարկման միջոցով, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի ֆինանսական ղեկավար

Ռուզաննա Առուստամյան

«ԷՅ-ԹԻ-ՓԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀՀ RA «ATP» CHARITABLE FOUNDATION 02554563 ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1440-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 07/80-2/41193-15 և դեկտեմբերի 22-ի N 06/3-3/41464-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՄ/22.2/14709-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան Արցախ» հիմնադրամի (ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ) միջոցով, «Կաթոլիկ բժշկական առաքելության խորհուրդ (CMMB)» ոչ առևտրային կազմակերպության կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (6 տեղ, 123 կգ ընդհանուր քաշով, 128,751.36 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 724.47 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1441-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41487-15 և դեկտեմբերի 22-ի N 06/3-3/41463-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/14809-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հեմոֆիլիայի համաշխարհային դաշնության (WFH) կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (մեկ տեղ, 13.3 կգ ընդհանուր քաշով, 20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 138,000 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2015 թվականի դեկտեմբերի 29-ի
N 15/15.6/22338-15 ելիցի

11 հունվարի 2016թ.

N 15/15.6/125-16

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1442-Ա որոշման 1-ին կետում «200 հատ» բառերը փոխարինել «1,000 հատ» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1442-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/41957-15 N 06/3-3/41950-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված դռան մուտքի քարտերը (200 հատ՝ 7.09 կգ ընդհանուր քաշով, 262.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 103.50 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1443-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-*
*ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-*
*թյան 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/41601-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/40982-15*
*եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի
ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական
ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական
բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի
մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի
28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի
N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հուն-
վարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա և օգոստոսի 28-ի N Մ-911-Ա, հոկտեմ-
բերի 2-ի N Մ-1051-Ա և դեկտեմբերի 4-ի N Մ-1299-Ա որոշումների խմբագրությամբ) հաս-
տատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝
«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2015 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝
N MI/021215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակյա միջնորմ-
ների, դռների ու սեղանի ապակու պատրաստում և տեղադրում՝ 8,994,000 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1444-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42243-15 և դեկտեմբերի 14-ի N 06/3-3/39971-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,944,000,000 դրամ» բառերը փոխարինել «2,087,040,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2015 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 9,600 հատ բացիկի տպագրության ծառայությունների մատուցում՝ 270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Արամ Միրզոյանցի հետ (անձնագիր՝ 716049414) 2015 թվականի նոյեմբերի 23-ին կնքված՝ N 01-23.11.15 պայմանագրում նշված



գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Իտալիայի Հանրապետության քաղաքացի Պիետրալոր Ծիտոյի հետ (անձնագիր՝ YA5003489) 2015 թվականի նոյեմբերի 5-ին կնքված՝ N 01-05.11.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սիմոնյան կրթական հիմնադրամի

տնօրեն Մարի Լու Փափազյանի կողմից

«21» Դեկտեմբերի 2015թ.

# ԹՈՒՄՈ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | • Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ և ԼՂՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,<br>• Առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոնկրետ ուղղություններով,<br>• Առանձին նպատակաուղղված դասընթացների միջոցով աջակցել ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայմանը կոնկրետ ուղղություններով,<br>• Խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել · շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ,<br>• Աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը:<br>Վերը նշված նպատակներին հասնելու համար, Ծրագրի կատարողը, օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ "Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն" ծրագրի առկա ազատ ռեսուրսները, նպատակ ունի իրականացնել տարբեր անվճար և վճարովի միջոցառումներ: |

2

| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարեգործական ռիսկման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվելու է տարբեր ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16, գրանցման թիվ 222.160.01143, վկայական 03Ա086142) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ-ում և ԼՂՀ-ում ՝ ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 2087040000 (երկու միլիարդ ութսունյոթ միլիոն քառասուն հազար) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br>• Կրտսեր խմբի 12-18 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոնկրետ ուղղություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց անդամագրության միջոցով: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով, սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:<br>• Ավագ խմբի 19-26 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի արդեն իսկ որոշակի մասնագիտական փորձ ունեցող շահառուների համար, որոնք ինքնուրույն |

| | | |
|---|---|---|
| | | հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող նպատակաուղղված դասընթացներին: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | «ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը, լինելով նախորդ «ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի շարունակությունը, նախատեսվում է իրականացնել ևս 3 տարով՝ հետագայում շարունակելու նպատակով, 2014թ-ի հունվար ամսից մինչև 2016թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը պայմանականորեն կարելի է բաժանել որպես մի քանի զուգահեռ իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնք անընդհատ իրականացվելու են հետագա երեք տարիների ընթացքում և միտված են ծրագրի նպատակների իրագործմանը, մասնավորապես՝ Ծրագրի կատարողն իրականացնելու է հետևյալ միջոցառումները.<br>• ստեղծարար տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդներին ընդհանուր գիտելիքների տրամադրում,<br>• նպատակաուղղված դասընթացների միջոցով խորացնել երիտասարդների մոտ առանձին ուղղվածության գիտելիքները,<br>• տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով խրախուսել կենտրոնի երիտասարդների միջև շփումը,<br>• օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ "Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն" ծրագրի առկա ազատ ռեսուրսները, իրականացնել տարբեր վճարովի և անվճար միջոցառումների ցանկ, որոնք նպատակ ունեն հնարավորություն ընձեռնել կենտրոնի անդամ երիտասարդներին շփվելու, հաղորդակցվելու օտարերկրյա երիտասարդների, մասնագետների, արհեստավարժների հետ, ինչպես նաև օգտագործել իրենց ստացած տեսական գիտելիքները պրակտիկ, աշխատանքային նախագծերում:<br>Երեք տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 2087040000 (երկու միլիարդ ութսունյոթ միլիոն քառասուն հազար) դրամ, որից՝ |



| | | |
|---|---|---|
| | | • Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի (ուսուցանողներ, ուսմանական բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարժանքներ ստուգողներ, ծրագրավորողներ, հաղորդակցման ոլորտի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -1113540000 (մեկ միլիարդ մեկ հարյուր տասներեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամ:<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -145800000 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն ութ հարյուր հազար) դրամ:<br>• Նպատակաուղղված դասընթացների կազմակերպման ծախսեր – 97080000 (իննսունյոթ միլիոն ութսուն հազար) դրամ:<br>• Գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 266094000 (երկու հարյուր վաթսունվեց միլիոն իննսունչորս հազար) դրամ:<br>• Հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 32679000 (երեսուներկու միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար) դրամ:<br>• Տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր - 41154000 (քառասունմեկ միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 358425000 (երեք հարյուր հիսունութ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) դրամ:<br>• Գործուղման ծախսեր – 7968000 (յոթ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 24300000 (քսանչորս միլիոն երեք հարյուր հազար) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • 2014-2016թթ-ի ընթացքում 286740000 (երկու հարյուր ութսունվեց միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և |

| | | |
|---|---|---|
| | | արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 71685000 (յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 51030000 (հիսունմեկ միլիոն երեսուն հազար) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 215064000 (երկու հարյուր տասնհինգ միլիոն վաթսունչորս հազար) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 16339500 (տասնվեց միլիոն երեք հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) դրամի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 16339500 (տասնվեց միլիոն երեք հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) դրամի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 87372000 (ութսունյոթ միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 9708000 (ինը միլիոն յոթ հարյուր ութ հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից: |



| | | |
|---|---|---|
| | | • 2014-2016թթ-ի ընթացքում 41154000 (քառասունմեկ միլիոն մեկ հարյուր հիսունչորս հազար) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 12150000 (տասներկու միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2014-2016թթ-ի ընթացքում 12150000 (տասներկու միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Երեք տարվա համար կազմակերպչական ծախսերը կազմում են 259473000 (երկու հարյուր հիսունինը միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար) դրամ, որից՝<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -145800000 (մեկ հարյուր քառասունհինգ միլիոն ութ հարյուր հազար) դրամ:<br>• Վարչական մասի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 38272500 (երեսունութ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) դրամ:<br>• Վարչական մասի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 4556250 (չորս միլիոն հինգ հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր հիսուն) դրամ:<br>• Գործուղման ծախսեր – 7968000 (յոթ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար) դրամ:<br>• Վարչական մասով տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր - 5467500 (հինգ միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | • Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 53763750 (հիսուներեք միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 3645000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1445 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 07/80-2/41122-15 և N 06/3-3/42016-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Հայ բժշկական ասոցիացիայի կողմից «IDA foundation» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի և բժշկական պարագաների (13 տեղ, 99 կգ ընդհանուր քաշով, 2,695.86 եվրոյին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռն ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1446 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/41963-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41629-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ** է.*

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքը անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2015 թվականի նոյեմբերի 9-ին կնքված N 01-015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 501,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1447 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 դեկտեբերի 24-ի N 07/80-2/41889-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41719-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի փողոց, 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004- որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի Մ-1237-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00253052) 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 011215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների հեղինակային վերահսկում՝ 6,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1448 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 07/80-2/41764-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/40986-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա և դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2015 թվականի օգոստոսի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 168,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի օգոստոսի 28-ին կնքված N 116527906 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի



հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հանրային էլեկտրոնային հաղորդակցության Hi-Line ծառայության մատուցում՝ 115,200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի հունիսի 20-ին կնքված N 117990093 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայության մատուցում՝ 124,800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02605138) 2014 թվականի հուլիսի 2-ին կնքված N ԱԻՆ 173 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բաժանորդային սպասարկում՝ 108,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ «Արևմուտք» մասնաճյուղ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի հունվարի 17-ին կնքված N 270612 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատուցում՝ 2,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի մայիսի 15-ին կնքված N 018.01.15.10394 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի մատակարարում՝ 1,540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 009430884) 2015 թվականի մարտի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազի սպասարկման ծառայությունների մատուցում՝ 48,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1449 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ի N Մ-051-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 1050 գրությունը, **ո ր ո շ ու մ է**.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Էջմիածնի Հայորդաց տան տնտեսական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N Մ-051-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) Էջմիածնի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի օգոստոսի 3-ին կնքված N 10002082749 պայմանագրում նշված գործարքը» բառերը փոխարինել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2015 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 08311157161 պայմանագրում նշված գործարքը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1450 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/41890-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41189-15 և հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամ կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1194-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1003-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1451-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1019-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 07/80-2/41891-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/41187-15 եզրակացությունները, հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2015 թվականի դեկտեմբերի 17-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին «Այբ» կրթական հիմնադրամ» N Մ-1019-Ա որոշման 1-ին կետում «10.081.622.5 դրամի չափով» բառերը փոխարինել «11,854,620 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**25 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1452 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-773-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 22-ի N 07/80-2/41514-15 և դեկտեմբերի 21-ի N 06/3-3/40987-15 եզրակացությունները, հաշվի առնելով «Այբ» կրթական հիմադրամի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին «Այբ» կրթական հիմնադրամի» N Մ-773-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «8,352,000 դրամի չափով» բառերը փոխարինել «12,672,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1453 -Ա**

(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 3**

(Հայաստանի մանուկների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42401-15 և դեկտեմբերի 24-ի N 06/3-3/41946-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2015 թվականի նոյեմբերի 3-ին կնքված N 18224182 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում՝ 312,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1454-Ա**
**քաղ. Երևան**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-912-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42400-15 և դեկտեմբերի 24-ի N 06/3-3/41907-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 60 գյուղական համայնքներում» ծրագրի մասին» N Մ-912-Ա որոշմամբ (2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1273-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N 03 եռակողմ համաձայնագրում (2013 թվականի օգոստոսի 12-ին կնքված N AT-AU-052-13 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին) նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,744,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1455- Ա**
**քաղ. Երևան**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42379-15 ու դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41716-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի N Մ-1085-Ա և 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1223-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն Կարեն Մանվելյանի,
և WWF-Գերմանիայի ներկայացուցիչ Մաթիաս Լիխտենբերգերի կողմից
«21» դեկտեմբերի, 2015թ

Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում
կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գնիշիկ (Մոզրով), Տաթև, Տանձատափ և Սվարանց համայնքներին աջակցություն ցուցաբերել ապրուստի դիվերսիֆիկացումը զարգացնելու համար՝ ստեղծելով խթաններ և այլընտրանքային ապրուստի միջոցներ փաստակելու հնարավորություններ՝ պահպանելու համար կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները, այսպիսով նվազեցնելու բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | *Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ),*<br>Հասցե՝ Am Sportplatz 30, 63791 Karlstein am Main, Germany, (Ամ Սփորտպլաց 30, 63791, Կառլշտեյն ամ Մայն, Գերմանիա)<br>Հեռ՝ +49 6188 99560<br><br>*և WWF-Գերմանիա:*<br>Հասցե՝ Reinhardtstraẓe 18 10117 Berlin, Germany (Ռեյնհարդշտրասե փողոց 18, 10117 Բեռլին, Գերմանիա)<br>Հեռ.՝ +49 30 31 17 77 0<br>+49 30 31 17 77 199 |
| 4. | Ծրագիրը կատարողը | *Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)*<br>ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7₂., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 11 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83<br>+374 10 54 61 56<br>Էլ. հասցե՝ office_am@wwfcaucasus.org |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայր՝ Վայոց Ձորի մարզի Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ, Սյունիքի մարզի Որոտան գետի կիրճը և հարակից տարածքներ:<br>Բնագավառ՝ կենսաբազմազանության պահպանություն և համայնքների զարգացում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 494,021 (չորս հարյուր իննսունչորս հազար քսանմեկ) Եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գնիշիկ (Մոզրով), Տաթև, Տանձատափ և Սվարանց համայնքները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.06.2015-31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 18,211 |
| 2. հողօգտագործման պլանի մշակում | հոկտեմբեր 2015-դեկտեմբեր 2015 | 13,068 |
| 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,267 |
| 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի զբոսաշրջային պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 20,364 |
| 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 – հոկտեմբեր 2016 | 9,821 |
| 6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում | նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2016 | 3,054 |
| 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-հուլիս 2016 | 8,712 |



| | | |
|---|---|---|
| 8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 8,171 |
| | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 5,538 |
| | հունվար 2017 - հունիս 2017 | 11,585 |
| 9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 18,509 |
| | հունվար 2016 – հունիս 2016 | 11,840 |
| 10. Տաթևի տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015-դեկտեմբեր 2015 | 10,454 |
| 11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հունիս 2016 | 2,178 |
| 12. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 38,094 |
| 13. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 21,695 |
| 14. Խաչիկ համայնքին բրիկետավորման մեքենայի տրամադրում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016 | 12,744 |
| 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015-դեկտեմբեր 2015 | 46,065 |

| | | | |
|---|---|---|---|
| | Վերջիններս պատկանելու են երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին:<br><br>Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքների հավաքագրման և վաճառման խանութի համար ՈՒԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | նոյեմբեր 2015 | 15,000 |
| | 16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-մայիս 2016 | 13,417 |
| | 17. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով: | սեպտեմբեր 2015-նոյեմբեր 2015 | 27,770 |
| | 18. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով: | հունվար 2015 – դեկտեմբեր 2015 | 24,573 |
| | 19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-մայիս 2016 | 13,417 |
| | 20. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման | մայիս 2015-ապրիլ 2016 | 54,450 |



| | | | |
|---|---|---|---|
| | միջոցառումների և մասնակցային հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | | |
| | գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| | գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| | ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| | հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| | գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| | Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| | Հեռահաղորդակցության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| | Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| | Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| | | Ընդամենը | | 494,021 |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
| | | 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 18,211 |
| | | 2. հողօգտագործման պլանի մշակում | հոկտեմբեր 2015-դեկտեմբեր 2015 | 13,068 |
| | | 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,267 |
| | | 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի զբոսաշրջային պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 20,364 |
| | | 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 – հոկտեմբեր 2016 | 9,821 |
| | | 6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում | նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2016 | 3,054 |
| | | 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-հուլիս 2016 | 8,712 |
| | | 8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 8,171 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 5,538 |
| | | | հունվար 2017 - հունիս 2017 | 11,585 |
| | | 9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 18,509 |
| | | | հունվար 2016 – հունիս 2016 | 11,840 |
| | | 10. Տաթևի տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015-դեկտեմբեր 2015 | 10,454 |
| | | 11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հունիս 2016 | 2,178 |
| | | 12. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 38,094 |
| | | 13. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 21,695 |
| | | 14. Խաչիկ համայնքին բրիկետավորման մեքենայի տրամադրում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016 | 12,744 |
| | | 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար ջրատմբերքի հավաքագրման և պահման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում Վերջիններս պատկանելու են երեք համայնքների | հունիս 2015-դեկտեմբեր 2015 | 46,065 |

| | | | |
|---|---|---|---|
| | (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին:<br><br>Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքների հավաքագրման և վաճառման խանութի համար ՈԻԱՉ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | նոյեմբեր 2015 | 15,000 |
| | 16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-մայիս 2016 | 13,417 |
| | 17. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով: | սեպտեմբեր 2015-նոյեմբեր 2015 | 27,770 |
| | 18. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով: | հունվար 2015 – դեկտեմբեր 2015 | 24,573 |
| | 19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-մայիս 2016 | 13,417 |
| | 20. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և մասնակցային | մայիս 2015-ապրիլ 2016 | 54,450 |



| | | | |
|---|---|---|---|
| | հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | | |
| | Ընդամենը | | 411,997 |

11\. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

| Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| Հեռահաղորդակցություն և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| | | Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |
| | | Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| | | **Ընդամենը** | | **82,024** |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ բնապահպանության նախարարություն<br>• Տարածքային կառավարման նախարարություն<br>• Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)<br>• Գերմանական համագործակցություն (GIZ)<br>• Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ (CARD)<br>• Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ)<br>• OXFAM Ինթերնեյշնլ<br>• Արենի, Խաչիկ և Գնիշիկ/Մոզրով (Վայոց Ձոր), Տաթև, Տանձատափ և Սվարանց (Սյունիք) համայնքապետարաններ<br>• «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ | | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• WWF-Գերմանիա՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ հաշվետվությունների միջոցով<br>• Ներքին և արտաքին աուդիտի միջոցով | | |

Տնօրեն՝ Կարեն Մանվելյան , (WWF-Հայաստան) ____________

Դոնորի ներկայացուցիչ՝ Մաթիաս Լիխթենբերգեր (WWF-Գերմանիա) ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1456-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42378-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41721-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 02/14/16010-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N ԱՄ/22.2/14873-15 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի դեկտեմբերի 24-ի N 101/104.3.2/5680-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հոյսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 4,203,399 դրամ ընդհանուր արժեքով «Տաշիրի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի նոյեմբերի 27-ին կնքված՝ N 271115 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 4,203,399 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Տաշիրի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«18»-ը դեկտեմբերի 2015թ.

**«Տաշիր բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգում»**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Լոռու մարզ, քաղաք Տաշիր, Գրիբոյեդովի 3 հասցեում գտնվող «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնակի վերանորոգման՝ դռների և լուսամուտների տեղադրման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, քաղ. Հարդերվայք 3842 DR, Ոուստայնդե 23) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ՝ առողջապահական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 4,203,399 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Լոռու մարզ, քաղաք Տաշիր, «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ<br>Տնօրեն՝ Չալաբյան Վալիկո, անձնագիր՝ AK0627955, տրվ. 30.09.2010թ. տրվ. 039 կողմից |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2015 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2016 թվականի մարտի 1-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2015 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2016թ. թվականի մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնակի վերանորոգում՝ դռների և լուսամուտների տեղադրման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ՝ 4,203,399 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնակի վերանորոգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 4,203,399 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի մարզպետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում «[illegible]» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց՝ <u>տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը</u>
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1457-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 07/80-2/41228-15 և N 06/3-3/42144-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 1/06/1633-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված դահուկուղու պատրաստման տեխնիկայի (մեկ տեղ, 247 կգ ընդհանուր քաշով, 5,325 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,080 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) և քրոնոմետրաժ սարքավորման (մեկ տեղ, 5.6 կգ ընդհանուր քաշով, 8,584.05 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 30.09 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1458-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42455-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41718-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՄՋՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2015 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ռետինե ժապավենների ձեռքբերում՝ 150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2015 թվականի դեկտեմբերի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թռուցիկների տպագրման աշխատանքների իրականացում՝ 72,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1459 -Ա**

(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 07/80-2/42384-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41720-15 եզրակացությունները, հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2015 թվականի դեկտեմբերի 21-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի Մ-1237-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,994,500.000 դրամ» բառերը փոխարինել «2,006,500,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«Այբ» կրթական հիմնադրամի**

**Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից**

**18 դեկտեմբերի 2015թ.**

# «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցման ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է ստեղծել «Այբ» դպրոցի երրորդ՝ Գ մասնաշենքը՝ 180 երեխայի համար: «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցումը հանդիսանում է «Այբ ավագ դպրոց» ծրագրի շարունակությունը, որը որակվել է բարեգործական ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 - Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ: Այն ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական համալիր» ծրագրի:<br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն է: Նման կրթություն տալու, ուսյալ, առաքինի,. ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվել և զարգացվում է «Այբ» դպրոցը: Դպրոց, որը կդառնա 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի մոդել և իր դրական ազդեցությունը կունենա ողջ կրթական համակարգի վրա: Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի, մասնագետների վերապատրաստման,նախագծային, փորձաքննական, շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝<br>▪ ՀՎՀՀ 01558429 |

<table>
<tr><td></td><td></td><td>▪ Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>▪ Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ005-053483-001<br>▪ Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.<br>1. «Այբ ավագ դպրոց» ծրագրի շրջանակներում Երևանի Այբ դպրոցի («Այբ կրթական հանգույց» հիմնադրամի) շինարարության, սարքավորումների և նյութերի ներմուծման, տպագիր և էլեկտրոնային նյութերի ձեռքբերման ծրագիրը <u>որակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 – Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ:<br>2. «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>որակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ:<br>3. «ԱյբԼաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագրի շրջանակներում Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի քիմիայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>որակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. հուլիսի 27-ի N Մ-626-Ա որոշմամբ:</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Ծրագրով նախատեսվում է Երևանում՝ Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում կառուցել, կահավորել, ուսումնական, լաբորատոր և համակարգչային սարքավորումներով հագեցնել, ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով (այդ թվում՝ դասագրքեր, ուսումնական տպագիր և տեսաձայնային ձեռնարկներ) զինել «Այբ» դպրոցի երրորդ՝ Գ մասնաշենքը:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն:</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2.006.500.000 դրամ, որը ներառում է շինարարության, սարքավորումների և տեխնիկայի, ինչպես նաև կազմակերպման ընդհանուր ծախսերը:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացողները Երևանում տեղակայված ոչ պետական «Վեմ» բարեգործական հասարակական կազմակերպությունն ու «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը: «Վեմ» ԲՀԿ՝ լինելով Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեով գտնվող հողամասի և շինությունների սեփականատերը, հանդիսանում է շինարարական աշխատանքների մասով բարեգործություն ստացողը, իսկ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը՝ լինելով ՀՀ ԿԳ նախարարության կողմից որպես դպրոց լիցենզավորված կազմակերպություն և բուն հանրակրթական գործունեություն իրականացնող, հանդիսանում է շարժական գույքի և ծառայությունների մասով բարեգործություն ստացողը:</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>Ծրագրի սկիզբը՝ 2014թ. սեպտեմբերի 15, ավարտը՝ 2017թ. սեպտեմբերի 31, տևողությունը՝ 36 ամիս:</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>Ծրագիրը նախատեսում է «Այբ» միջին դպրոցի Գ մասնաշենքի կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, դպրոցական ավտոբուսների գնում, տարածքի բարեկարգում:<br>Աշխատանքները կավարտվեն 2017թ. սեպտեմբերին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 2.006.500.000 դրամ, որից Շինարարություն – 1.824.400.000 դրամ, Տեխնիկա/սարքավորումներ – 94.300.000 դրամ, կազմակերպման ընդհանուր ծախսերը - 87.800.000 դրամ:</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում.
<table>
<tr><td></td><td>'000 AMD</td></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>1,918,700</td></tr>
<tr><td>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</td><td>1,824,400</td></tr>
<tr><td>Այդ թվում՝</td><td></td></tr>
<tr><td>ՀՀ-ից</td><td>1,512,384</td></tr>
<tr><td>Ներմուծում</td><td>300,016</td></tr>
<tr><td>Նախագծում, փորձաքննություն, վերահսկողություն</td><td>35,400</td></tr>
<tr><td>Շինարարություն, որից</td><td>1,809,016</td></tr>
<tr><td>Հիմնակմախքի շինարարություն, այդ թվում</td><td>806,600</td></tr>
<tr><td>Նյութ</td><td>306,640</td></tr>
<tr><td>այդ թվում ներմուծում</td><td>40,000</td></tr>
<tr><td>Աշխատանք</td><td>459,960</td></tr>
<tr><td>Ներքին հարդարում, այդ թվում</td><td>1,002,416</td></tr>
<tr><td>Նյութ</td><td>323,360</td></tr>
<tr><td>այդ թվում ներմուծում</td><td>194,016</td></tr>
<tr><td>Աշխատանք</td><td>485,040</td></tr>
<tr><td>Կահավորում</td><td>160,000</td></tr>
<tr><td>այդ թվում ներմուծում</td><td>32,000</td></tr>
<tr><td>Անվտանգության համակարգեր, սերվեր</td><td>34,000</td></tr>
<tr><td>այդ թվում ներմուծում</td><td>34,000</td></tr>
<tr><td>Բարեկարգում/ցանկապատում/կոմունիկացիաներ</td><td>20,000</td></tr>
<tr><td>ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ</td><td>94,300</td></tr>
<tr><td>Այդ թվում՝</td><td></td></tr>
<tr><td>ՀՀ-ից</td><td>13,320</td></tr>
<tr><td>Ներմուծում</td><td>80,980</td></tr>
</table></td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | Տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր 2,300<br>Այդ թվում ներմուծում 1,380<br>Տեխնիկա, սարքավորումներ 62,000<br>Այդ թվում ներմուծում 49,600<br>Դպրոցական պատվերներ 30,000<br>Այդ թվում ներմուծում 30,000 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ընդհանուր ծախսերը կազմում են՝ 87.800.000 դրամ, որից.<br>Ծրագրային աշխատավարձ - 80.000.000 դրամ<br>Ծրագրային վարչական ծախսեր - 7.800.000 դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն,և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Լևոն Ղազարյան (ԱՄՆ)<br>3. Դավիթ Յան(ԱՄՆ, Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաելյան (ԱՄՆ)<br>5. Արտաշես Շիրիկյան (Հայաստան, Ռուսաստան)<br>6. Աշոտ Թումասյան (Ռուսաստան):<br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1460 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

## («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 07/80-2/42487-15 և դեկտեմբերի 23-ի N 06/3-3/41717-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզա-առողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Новые спортивные технологии» ՕՕՕ-ի հետ (ՀՎՀՀ՝ 7706500819) 2015 թվականի հուլիսի 31-ին կնքված N Н-35У/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծառայությունների մատուցում՝ 1,650,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1461- Ա**

**քաղ. Երևան**

**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1284-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 07/80-2/42560-15 ու դեկտեմբերի 24-ի N 6/3-3/41931-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1284-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձորաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01227621) 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N ՇՀԱՊՁԲ-15/13-ՏԴՊԱԿ-33-1 պայմանագրում (2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 1 համաձայնագիր) նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային կահույքի ձեռքբերում՝ 1,698,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1462-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 25-ին)**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

